



ԻՐԱԾ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ  
ԽՄՐԻՄՐՈՒԹԵՄՆ  
ՀԱՅՈՒ  
ԵՐՈՒՍԱԼԵՄԻ



Ը-ՏԵՐ

1976





ԿՐՈՒԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ  
ՊԱՅՏՈՆԱԹԵՐԹ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԿԱՐԵԼԻՔԻՒՄ

1976

Փետրուար - Մարտ

Թիվ 2 - 3

1976

February - March


No. 2 - 3

# S I O N

VOL. 50

A MONTHLY OF RELIGION, LITERATURE AND PHILOLOGY  
OFFICIAL PUBLICATION OF THE ARMENIAN PATRIARCHATE, JERUSALEM

Proprietor: His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem



St. James Press  
Jerusalem





### Յ Ա Յ Ս Փ Ի Ի Ռ Ք Ը

ԵՒ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ

### Ա

ՀԱՅ գաղթաշխարհը, իր Փիդիքական տարանջատումներու պատկերով միութիւն մը ըլլալու իր տագնաապր կ'ասլրի։ Մեզի չեն պակսիր անշուշտ անտեսական գոհացուցիչ պայմաններ, մեր մէջ տկարացած չեն նաև կրօնական և կրթական զգացումները, ոչ այ իրրե ժողովուրդ ապրելու գիտակցութիւնը, բայց մեզի, երկու պատերազմներու միջև ապրող սփիւռքի սերունդին, կը պակսի այդ բոլորը ոգեսրող և նպատակաւորդ աշխարհահայեացքը։ Կուսակցութիւններ, յարանուանութիւններ, անհատապաշտ անհիւանական ձգտումներ, և անոնց իրարու նկատմամբ ունեցած անհանդուրժող և անզիջող ոգին անշուշտ դեր մը ունին, սակայն ստեղծիչը չեն անոր։ Այս բոլորէն վեր, տիրաբար իշխող համազգային գիտակցութիւն մը կարելի չեղաւ ցարդ մշակել Հայ Սփիւռքին մէջ։ Հայութեան այս պատրաստութեան մէջ Եկեղեցին, գպրոցներ, կուսակցութիւններ առանձնաբար, իրենց ուժերուն ներած չափով, փորձեցին պայծառացնել այդ գիտակցութիւնը։ սակայն ցարդ համագործ և ծրագրուած աշխատանք մը տարուած է։

Անշուշտ աղէտը որ զարկաւ մեր ժողովուրդը, որուն ճարակը եղանք աղգովին, աննման՝ մարդկային տարեզրութեանց մէջ, իր տեսակովս ու ծաւալովը, իր տեղը ունի երկու մեծ պատերազմները ապրող մեր ժողովուրդի հոգիին վրայ։ Այդ է պատճառ

որ ամէն ժամանակներէ աւելի՝ ապրուած սարսուռները կը մնան անկշխո և անցեալի թերութիւնները կը մեծնան աւելի ծանր հետեւանքներով։ Մենք կը կորսնցնենք տակու Հայ հոգիին յատկանիշները, կարծես թէ դադրած ենք դարաւոր մշակոյթի տէր ժողովուրդի մը համբաւին հաւատարիմ ըլլալէ։ Այս հանգամանքին արդիւնքն է թերես որ այսօր դէպեքր կը գարեն մեր ճակատագիրը, բայց էր երրեմն երբ մենք մեր կեանքը կը շինէինք դէպեքրու աղդեցութենէն վեր իմաստութեամբ և մզումներով։

Նոր չէ որ Հայը գաղթաշխարհի տարածքին վրայ դրուած ըլլայ լինել թէ չինելու ճշմարիտ տաղնապի մը առջի։ Ապրուստի հոգը, ապահով կեանքի մը պահանջր, միջավայրին յարմարելու անդամի հարկադրանքը, կը ակարացնեն հայաստահուանման պարտաքննութեան ու բնագլու լայն շափերով։ Եթէ Սփիւռքի մէջ տնձնիւր Հայը դառնայ իր պատկանած երկրի քաղսւքացին, իր գաւակներուն տայ միայն այդ երկրի գաստիւրակութիւնը, ապրի նոյն տշխարհամասի քաղաքական կեանքով և մշակոյթով, դրժուարութիւններու մէկ կորենոր մասը կը հարթուին, բայց կը չքանայ նաև Հայութիւնը։ Հոս չենք ուզեր անգամ մը ես աճեցնելու գերը մէր ժողովուրդի ինքնապահպահնման ամուր և խոր ընազդութուն, մէջտեղ է իր պատմութիւնը։ Դէմ ենք կեցեր սուրով իսկ, հակառակ մէր տկարութեան, այդ ողիին սիրոյն, աշխարհակալ կայսրութեանց, և պահէր՝ մենք զմել։ Կը հաւատանք թէ կաղմակերպուած, գիտակցուած և աղգովին հետապնդուած քանի մը կենսական սկզբունքներ կրնան մեզ ապատագրել լինել-չլինելու այս տագնապէն։

Սակաւաշնորհ ժողովուրդ մը չենք, բայց մէր պատմական ճակատագիրը արգիլեր է յաճախ մեղի կարելի հպարտութիւնն ու յաւակնութիւնը։ Զինուորական փառքը, ճակատամարտներուն խանդավառութիւնը արհամարհելի չեն, բայց չեն կրնար պատմութիւնը փոխանորդել։ Կը հաւատանք մէր ժողովուրդի արժէքներուն, առանց ընկերու անոր թերութիւններու և արժէքներու գուգակիուը։ Ասիկա պիտի ըլլայ օր մը Հայոց հայրենիքին մէջ, ամրող ջական գիւտէն վերջ Հայ ժողովուրդին։ Այս տողերը կը գրուին ոչ թէ միջադային պազարի մը հաշոյն, այլ սփիւռքի մէջ ծուարած ու չուարած, իր ճակատագրին անվստահ, իր ընլիքի մասին հակամարտ ազգեցութեանց իրերուն զանգուածի մը, հրաւիրելու զայն ոչ յաղթանակի հպարտութեան, այլ մարդկային տարրական վստահութիւններու, որոնցմէ տարօրէն աղքատազած ենք Սփիւռքի մշուշներուն նստածներս։ Անշուշտ կայ Հայրենիքի փառքըն ու ապահովութիւնը, սակայն այս պարագան ոչինչ կը փոխէ Սփիւռքէն՝ որ պարտաւոր է ինքզինքը մարսել, այսինքն իր միտքին, սիրտին հասած բոլոր նուաստութիւնները այլակերպել։

Ոմանք մտահոգ ներկայէն, վախ ունին որ գալիք սերունդները ազգակորոյս գառնան։ Ժողովուրդները անտարակոյս կը կը-րեն որոշ ճեափոխութիւններ գարերու ընթացքին։ այսօրուան Հա-

յութիւնը նոյնը չէ, ինչ որ էր հազար կամ նոյնիսկ հարիւր տարի առաջ։ Ամէն ժողովուրդ, որքան ալ զօրաւոր ըլլայ և լաւ պաշտպանուած, պիտի կրէ օտար ազգեցութիւններ։ Հազորդակցութեան միջոցներու գիւրութիւնը, ձայնասփիւոր, հեռատեսիլը, ուղանաւոր, գիտական յեղաշրջումները պատճառներ են որ մարդիկ իւրացնեն դրացիին նուաճումները և այսպէս կատարուի կարելի ներթափանցումը, որուն դէմ թումբ կանգնիլը կը նշանակէ լճանալ, կորստեան դիմել։ Օտար ազգեցութիւններու գէմ պատքաշելով չէ որ կարելի է պահել ազգութիւնը, այլ թափանցելով օտար ժողովուրդներու մէջ, իւրացնելով և մարսելով անոնց տուածը։ Կը բայէ որ իւրացնելու կարողութեամբ օժտուած ըլլանք։ Հայ ժողովուրդը ունի այդ կարողութիւնը, մենք կերեր և մարսեր ենք պարթեական, պարսկական, յունական, արարական, հռովմէական քաղաքակրթութիւնները։ Մեր Ռսկեզարր արդիւնք է օտար մշակոյթները խորապէս իւրացնելու կարողութեան։ Հայ Եկեղեցին մեծագոյն փաստն է այդ երեսոյթին։ Մենք կրցանք իւրացնել քրիստոնէութիւնը, առանց թողլու որ քրիստոնէութիւնը ձուլէ մեզ, — այդ է Ե. Դարու հրաշքին իմաստը։ Եթէ մենք այդ հեռաւոր թուականներէն սկսեալ մինչեւ այժմ կրցեր ենք դիմանալ, պատճառը այն է որ կրցեր ենք սնանիլ, տարրալուծելով և ներծույլով օտար մշակոյթները։ Առեր ենք ինչ որ համապատասխան է եղած մեր էութեան, ինքնութեան, ապրումին. փոխակերպեր ենք, փոխակերպուեր ենք, ձև ու դիմագիծ ենք փոխեր, առանց վնասելու մեր խորքին։ Վա՞յ այն ժողովուրդին որ չի կրնար մարսել, չի կրնար իւրացնել, չի կրնար թափանցել. ան դատապարտուած է մեռնելու։ Աղդեցութիւն կրելը օրէնք է մշակոյթ ստեղծելու համար, ոչ թէ փոխազբելու, այլ իրեւ հոգեկան պարարտ գործածելու։ Նորը ստեղծելու համար։ Այսօր Ռուսացը կը մերժեն Ամերիկացիներուն մշակոյթի մը հպարտութիւնը, անոնց թէքնիքին — նոյնինքն մետաղին և մետաղացած իմացականութեան — ընկելով զիջում, բայց փտարելով զիրենք իսկական մշակոյթէն՝ որ ոզիով է պայմանաւոր։

Սփիւռքի Հայութիւնը իրեւ քանակ, որակ և կարելիութիւն արհամարհելի շրլլալով հանդերձ, հանդերձուած չէ միսմինակը իւրացնելու ինքինքը, երբ օրը օրին աւելի կը տեսնենք թէ ամէն երկրի մէջ քաղաքական հայեացքը ի՞նչ ուղղութիւն կը ստանայ փոքրամասնութեանց ինքնութեան հարցին վերաբերմամբ։ Պէտք չէ մոռնալ նոյնպէս թէ արդի ընկերութեան, աւելի ծիչդ քաղաքակը թուան մէջ անհատը փոխարինուած է զանգուածով, թէ այսօր պատմութեան բեմը կը գրաւեն շարժման մէջ եղող հաւաքականութիւնները։ Զանգուածները անշուշտ նոր չէ որ զեր մը կը կատարեն պատմութեան մէջ։ մարդու միշտ տիրապետուած է բաղմութենէն, որակը՝ քանակէն, սակայն զանգուածը բնաւ չէր խաղցած այն մեծ գերը որքան մեր օրերուն։ Կարելի չէ այլևս անհատարար ապրիլ և մտածել։ Մշակոյթը կը ծառայէ զանգուածին, որ կը նշանակէ վերջ անհատականութեան։

Հակառակ այս իրողութեան, որ անցաւոր երեսյթ մըն է անանցին մէջ, ընկերային գերազանց ուժք, որ ամէնէն դօրաւոր կերպով կը գրկէ մարդերը, որ զանոնք զօրացնելու, միացնելու գերագոյն ազդակն է, որ՝ Հայրենիքի, մտքի և սրսի մշակման, յեղափի, բարքերու, կրօնքի և ապագայի մէջ ալ ամէնէն աւելի միբրձուող հասարակաց իտէալի կապերով կը միացնէ մարդիկր, և անոնց հանձարներուն մեծագոյն ներշնչողը կ'ըլլայ, աղքային ընկերութիւնն է: Ի հեճուկի փութկոտ նախագուշակութիւններու, աղգային զգացումը մարդկութիւնը վարող և անոր մէջ ամէնէն աւելի ի խոր ակօսներ բացողն է: Մեր մէջ ևս տակաւին կենդանի է այդ հոգին, որ գիտցած է երգել Գողթան երգերու քնարով, որ կանգնած է այնքան հաւատքով, հրաշքով և շնորհով հայկական ճարտարապետութեան կոթողները և անոնցմով արուեստի որրութեամբ սրբացուցած է Հայ Հողը: Այն հոգին՝ որ այնքան խորութեամբ քրիստոնէացաւ և դիցազններ պատրաստեց անիրաւութեան և բռնութեան դաւերուն դիմաց: Այն հոգին՝ որ ճառագայթ և քաղցրութիւն եղաւ Նարեկացիներու, Ծնորհալիներու և մեր աշողներու հոգիներուն մէջ: Վերջապէս այն հոգին՝ որ կը հնչէ Անիի աւերակներուն՝ Մասիսի ստորոտին հոյակերտուող ստեղծագործութիւններուն խորը, միշտ վերածնող խորհուրդով:

Այսօր սակայն, զօրաւոր ազգային զգացում մը, նոյնիսկ քաղաքական և ընկերային ազատ պայմաններով, ի վիճակի չէ ըԱվիոքի մէջ ցրուած մեր ժողովուրդի մասերը կենդանի և ապահով պահել: Քաղաքական, ընկերային, կրթական և նոյնիսկ կրօնական գետաբններու վրայ Հայ փոքրամասնութիւնները ճնշումի տակն են իրենց բնակած երկիրներու ազդեցութիւններուն, և այս յաճախ բռնի միջոցներով: Այսօր նոյնիսկ պատիկ ժողովուրդները ի վիճակի չեն իրենց գոյութիւնը ապահով չարունակել և ստիպուած են յաճախ կրթներու իրենցմէ աւելի զօրաւորին, կամ ընդունելու անոր համակրանքի հովանին, զոհելով շատ բան իրենց ազատութենէն և իրաւունքներէն:

Վերջին կենդանի օրինակը ի յայտ եկաւ Լիրանանի քաղաքացիական կոիններու ընթացքին: Լիրանանահայութիւնը իր բոլոր կուսակցութիւններով և յարանուանութիւններով որդեգրեց դրական չէզոքութիւնն կեցուածք մը: Այդ կեցուածքը չփրկեց զինքը սակայն զոհեր տալէ և տնտեսական վնասներէն: Աւելին՝ չի խոստանար բախտաւոր ապագայ մը, իրեն յատուկ: Երկրին մեծամասնութիւնը եղող և պայքար տանող կողմերու հետապնդումներէն որքա՞ն բաժին պիտի կրնանք ունենալ մենք և մեղի պէս թիւով քիչ համայնքները, նոյնիսկ Լիրանանի նման երկրի մը մէջ, որ իր պատմութեան վերջի շրջաններուն ապաստանարանը եղաւ հալածական զանգուածներուն, առիթ տալով բոլորին անխտիր ապրելու իրենց սեփական աւանդութիւններով, դաւանանքով, լեզուով, մը չակոյթով և իրայատուկ դիմագծով:

Աւելի քան յիսուն տարի է որ մեր մտաւոր, հոգեկան և ըն-

կերային ձգտումներու և ըղձանքներու արտայայտութիւնը եղող Հայ մամուլը կր ծրագրէ, կը քարոզէ և կը պատգամէ իր թէ մեր կեանքին վերարերեալ հարցերը և Սփիոքի մէջ մեր կեանքը ապահովութիւնը վրայ զնող միջոցառութնիր, բայց կր թուի թէ մենք տակաւին չաւնինք ուղղութիւն, վասնզի չենք գիտեր թէ ինչ կ'ընենք: Զունինք ակաւին մեր «ամէն բանէ վեր»ը, հասարակաց այն հոգեզինեալ կարգախօսը՝ որ ոսկի թելով մը առնչէր մեր հոգիները իրարու: Այդ պիտի բլար առաջն՝ և մեզմէ կախում ունեցող այն միակ պայմանը, որուն իրագործուած գիտնին վրայ կ'եցած՝ պիտի կրնայինք ողջունել մեր բոլորէն բղագագութիւնը Սփիոքի մեր աշխարհացրի Հայութեան:

Հայուն ճակատապիրը բալոր երկիրներու մէջ կր շարունակ մալ գժուարութիւններու և անտապահովութեանց շարայարութիւն մը: Հատուածական պայքարներ և յարանուանական մեկադրանքներ կր շարունակեն մթագնել մեր կեանքը, որ այնքան պէտք ունի փոխադարձ հասկացողութեան, իրար կարեկցելու և սիրելու համերաշխ զգացումներուն: Իրարու գործը արգիլելու, զիրար չէզոքացնելու և տապայելու համար վատնուած ուժերը, կորուած պատեհութիւնները եթէ գործածուէին մեր կեանքի կագմակերպութեան, պահպանման և ստեղծագործական թափին, մէջի պիտի շահեցնէին այն բոլորը՝ զոր չտրուեցաւ մեզի ունենալ անցնող յիսուն տարիներուն, հակառակ մեր պէտքին և փափաքներուն, և անոնց համար ազգովին ընդառաջուած զոհողութեանց:

Մէր նի թական և բարոյական գոյութիւնը ամէն օր հարկին տակն է լուրջ վտանգներու: Անհամերաշխ, անհանդուրժող մթնոլորտ մը կր սնուցանէ կիրքերը, կր կազմալուծէ բարեացակամութիւնները, կր զօրացնէ պառակումները և կր քայլայէ միասնական և հաւաքական ոգին: Պարտինք ունինալ միշտ, բայց մանանդ այս օրերուն, այն կարելի տրամադրութիւնը, մարդկօրէն և Հայորէն անաշառութեամբ և պաղարիւնով քննելու և լուծելու մեր մտքին և խղճին առջև գրուած ազգային հարցերը: Պէտք չէ որ առիթ բլանք մեր ցեղային հաւաքական կորովք քայլայող արարքներու և անոր խղճմատանքը պղտորող առիթներուն: Ինքնաճանաչ հասարակութիւններու համար վէճը սկզբունքին չուրջ չէ, այլ այն միջոցներուն և գործունէութեան՝ որոնց միջոցաւ կ'արտայայորւի և կ'իրացուի սկզբունքը:

Հոս կր վերջացնենք, իմբագրականներու շարքի մը իրր յառաջարան ծառայող այս ընդհանուր ակնարկը, ըսելու համար յետոյ մեր բուն ըսելիքը:

## ԱՍՏՈՒՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ

### ՏԵՍԱԿԱՆ ԱՍՏՈՒՐԱԲԱՆՈՒԹԻՒՆ

**202. ՔՐԻՍՏՈՍԻ ՓՐԿԱՆՔԸ.** Խօսելով մասնաւորապէս Քրիստոսի հատուցած փրկանքին վրայ, պարտինք ճանչնալ զայն նախ իրեք արժանաւոր իր նպատակին լրման համար, այսինքն է համեմատ և բաւական հատուցմանը համար յանցանքին կամ պարտինք՝ զարդ մարդ Աստուծոյ կը պարտէր։ Այդ բաւականութեան կը վկայէ Պօղոս, ըսկելով. «Միով պատարազաւ կատարեաց զսրբեալն ի մշտնջենաւորս» (Երր. Ժ 14), որպէս թէ ըսէր՝ միանդամընդմիշտ բաւական եղաւ Քրիստոսի պատարազը բոլոր մարդոց որորւթեան համար։ Բայց Քրիստոսի պատարազը ոչ միայն բաւական եղաւ, այլ առաւել նաև քանի զրաւական, վասնդի անոր արդինքը աւելի եղաւ քան պարտիքը զոր պէտք էր հատուցանել։ Ու ասիկա կը բացայայտուի Պօղոսի միւս խօսքն. «Ձի ուր առաւել եղեն մեղքն, առաւել ևս յաւելին չնորհքն» (Հոռմ. Ե 20)։ Եւ Պօղոսի այս խօսքը եղբակացութիւնն է այն զլուխին, որ ուրիշ բան չուզեր ցոյց տալ եթէ ոչ առ թէ ինչպէս Աղամեով մրտաւ, նոյնպէս Քրիստոսով վերցուեցաւ մեղքը։ Հատուցման այդ բաւականութիւնն և առաւելութիւնը, առանց Ս. Գիրքին խօսքերու, կարելի էր հանել և շետեցնել մարդեղութեան խորհուրդէն նոյնիսկ, վասնդի նաոր կը հատուցանէր՝ չչը հատուցաներ իրեն մարդ լոկ, այլ քանի որ Աստուած էր և մարդ՝ իրեն Աստուած և մարդ, միաւորեալ անքննելի միաւորութեամբ։

**203. ՔՐԻՍՏՈՍԻ ԳՈՐԾԵՐԸ.** Խնդիր է նաև թէ Քրիստոսի գործերը ինչպէս կրցան հատուցման արժանիք և արդիւնք ունենայ. բայց մարդեղութեան խորհուրդին հիման վրայ դիւրաւ կը պարզաբանուին այդ գժուաւութիւնները։ Որպէսզի զործ մը արժանաւոր համարուի, պէտք է նախ որ այդ գործուած կըլլայ բոլոր կամեցողներուն, և ուրիշ՝ անհատաբար անոր մերձնալը և զայն իրեն սեփական բատցութիւն և վայելք անձին պատշաճնենել ուզելը։ Փրկին անսահման արդինքներէն վերջ մարդերէն պահանջուած ասհմանաւոր արդինքներու պարագան այդ երկրորդ կէտը կը ներկայացնէ, ու մարդոց արդիւնեները արդարե բոլորովին աննշանակ կ'ըլլային, եթէ հիմնուած ու պատշաճնեցուած չըլլային Քրիստոսի արդիւնքներուն վրայ։

դատ և բարի ըլլայ, յետոյ՝ որ զործողը Աստուծոյ հանոյ և ի վիճակի ըլլայ արդիւնաւորթեան, ի վերջոյ՝ որ Աստուծոյ կողմէ վարձքի խոստում ըլլայ։ Արդ, այս երեք պայմանները կը ճշմարտուին Քրիստոսի վըրայ, Ս. Գրոց խօսքերէն։ «Քրիստոս սիրեաց զմեզ և մատնեաց զանձն իւր վան մեր պատարազ և զենումն Աստուծոյ» (Եփսու. Ե 2)։ «Խոնարհեցոյց զանձն մասնորոյ և Աստուած զնա առաւել բարձրացոյց» (Փիլ. Բ 8, 9)։ «Եթէ տաջիք զիասն մեղացն, անձինք ձեր տեսցն զաւակ երկայնակեցց» (Ենայի ԾԳ 10)։

**204. ԱՆՍԱՀՄԱՆ ՓՐԿԱՆՔ.** Վերջապէս մարդոց գրկութեան համար Քրիստոսի ունեցած արդիւնքներուն վրայ խօսած ատեն անոնք անսահման և անչափ կ'ըսուին։ Ինչո՞ւ ուրիմի անշափ և անսահման արդիւնքներէն ետք իւրաքանչիւր մարդու արդիւնքն ալ կը պահանջուի իր անհատական գրկութեան համար։ Դժուար չէ ըմբռնել ատիկս, որովհետեւ ուրիշ է իրեն հասարակ բարիք յառաջ բերուած և աւանդուած արդիւնքը, որ այդպէս գիւրամերձնեալի զործուած կ'ըլլայ բոլոր կամեցողներուն, և ուրիշ՝ անհատաբար անոր մերձնալը և զայն իրեն սեփական բատցութիւն և վայելք անձին պատշաճնենել ուզել։ Փրկին անսահման արդինքներէն վերջ մարդերէն պահանջուած ասհմանաւոր արդինքներու պարագան այդ երկրորդ կէտը կը ներկայացնէ, ու մարդոց արդիւնեները արդարե բոլորովին աննշանակ կ'ըլլային, եթէ հիմնուած ու պատշաճնեցուած չըլլային Քրիստոսի արդիւնքներուն վրայ։

**205. ՔՐԻՍՏՈՍԻ ԱՂՈԲՔԸ.** Ամանք դըժուարութիւն մը կը համարեն սա կէտը թէ ի՞նչ կը նշանակէր աղօթքը զոր Քրիստոս իր

կեանքին մէջ կը ժառուցանքր և զոր կը ժառուցանէ տակաւին ըստ Պօղոսի. «Ե ընդ աջ-է Աստուծոյ, որ և բարեխօս իսկ է վասն մեր» (Հոռմ. Ը 34)։ Այս բանին մէջ ալ պինդ բոնիով մարդկութեան խորհուրդին հրեց և յինով յատկութեանց հաղորդութեան սկրդ-րոնքին վրայ, ինչպէս և հետեւով անձառ ժիաւորութեան վարդապետութեան, գծուար շըլլաք երրեց իմանալ թէ կատարեալ Աստուծ և կատարեալ մարդ եղողին մէջ ինչպէ՛ս աստուծայինները և մարդկայինները մի-անգամայն կը ճշմարտուին. բայ որում, եթէ բարեխօս կ'ըսուի մարդկութեան համար, տուի՛ կը լինի Քրիստոսի աստուծութիւնը. «Չոր ինչ խնդրիցէք յանոն իմ, արարից զայն» (Յովկ. ԺԴ 14)։ Բայց որովհետեւ հա-

ւատացեալներուն համար յարժարադոյն է բարձրագոյնին նայիլ, այս պատճառու Ս. Եկեղեցին իր աղօթքներուն մէջ կը պիրէ յա-էտ գիմել առ Քրիստոս իրրե տուիչին ոչ իրրե բարեխօսի, թէև յաճախ տնօրինական-ները յիշատակելով, կ'աղօթէ առ Հայր վասն խաչին, վասն յասանց ևայնն Քրիստոսի այս կեանքին մէջ ժառուցած աղօթքը երկու նպա-տակ ունէր: Մին՝ որպէսզի մարդկային կեանքի բարի կարիքները լրացում զանէին, և երկրորդ՝ որպէսզի այդ կարիքները ու-սուցուէին ոչ լոկ խրատով, այլ նաև օրինա-կով:

Այսքան մարդկեղութեան խորհուրդին վր-րայ, առանց երկարարանութեան:

### Ց Ա Ղ Ա Գ Ս Պ Ա Շ Տ Ա Մ Ա Ն Ց

**206. ՊԱՇՏԱՄՈՒԽՆՔԻՆ ՏԵՍԱԿԱՆՆԵՐԸ.** Պաշտամունքին մասին ընդհանուր կերպով խօսեանք, երբ Աստուծութեան և կրօնից մասին իմաստասիրական սկզբունքներ յա-ռաջ բերինք: Հիմա մեզի կը մնայ խօսի յատ-կապէս պաշտամունքի մասին, ինչպէս որ կ'իմանանք և կը կատարենք զայն քրիստո-նէական հաւատքին համաձայն:

Հարկ չկայ ուրեմն ըսկուու թէ ի՞նչ է պաշ-տօնք կամ պաշտամունքը, և թէ ի՞նչ տար-քերութիւն կայ ներքին կամ արտաքին կամ հրապարակային պաշտամունքներուն միջն. Հարկ է միայն որ ըսկուու թէ ինչպէ՛ս կը բաժ-նուին պաշտամունքները իրենց աստիճաննե-րուն համեմատ, որոնք յունալատին բառերով կ'ըսուին լարմա և աւլա, և զոր մէր լեզուին մէջ թարգմանուած կը գտնենք երրեմն եր-կրպազութիւն և մեծարանք բառերով, և եր-րեմն՝ պաշտման թիւն և յարգութիւն բառե-րով:

Բայն պաշտեւութիւնը կամ պաշտեւու-թեան պաշտամունքը միայն Աստուծոյ է սե-փական, իսկ յարդութեան պաշտամունքը ըն-ծայելի կը նկատինք Աստուծոյ ընեւուի սուր-քերուն կամ սիրելիներուն: Կայ նաև կիրտ-աւլա, որ և գերյարգութիւն, միջասահման աստիճան մը, տարրեր պաշտեւութենէ և ա-ւելի քան յարդութիւնը, զոր ոմանք յատկա-

պէս կազմած են Աստուծածին Մարիամու համար: Պաշտեւութեան և յարգութեան աս-տիճանները ի գէպ է ցոյց տալ օրինակովը պատույ և մէծարանք այն աստիճաններուն, զորս ոսկոր ենք բնծայել թաղաւորին և աւա-գանին:

**207. ՊԱՇՄԱՆՑ ՊԱՇՏԱՄԱՆՑ.** Ուզիգ հասկնայու համար պաշտամունքները, որոնք կրնան բնծայուի որու որ պատշաճ նկատ-ուին, կամ որոնց մասին կրնան խնդիրներ յուզուի և ծնունդ տալ տարրերիս կարծիք-ներու, ի գէպ է յիշել ինչ ինչ տեղեկութիւն-ներ:

Նախ՝ պաշտամունքի ատեն գործածուած բառերը, խօսքերը, գործերը և շարժուածք-ները անպատճան միենայն կերպով որոշի: ի-մասս մը չեն կրնար ունենալ, որովհետեւ մի-ենայն բառը կամ գործը երրեմն կ'ուղղուին զանազաններու, որոնք միւնայն աստիճանի վրայ չեն կրնար նկատուիլ: Ասիկա գիտեի է մասնակաբան երկրպազութիւն բառին հա-մար (Adoration), որ աստուծային պաշտե-լութեան գերագոյն բացարութիւնն է: բայց կը տեսնենք նաև որ Արքահամ (Մննդ. ԺԲ 2) և Ղովա (Մննդ. ԺԲ 1) կ'երկրպազնն հրեշ-տակներուն. Արքահամ դարձեալ՝ Քետացոց յիշաններուն (Մննդ. ԻԳ 7). Յովսէփի որ-

դիները կ'երկրպագեն Յակորի (Ծննդ. Խթ. 12) և յաճախ կը տեսնուի որ երկրպագութիւն կ'ընծայուի ժարդոց, առանց սակայն իր Աստուած պաշտեյու զանոնք: Եւ որովհետեւ միենայն խօսք մը կամ զործ մը կրեայ տարրեր իմացուածներ ունենալ, չեսեարար և Ըստ է իմացուածի այդ տարրերութեան համեմատ միենայն խօսքը կամ զործը հաստատել կամ ժխտել: Այս պատճառու, իրի պաշտամանց վերջնական և որոշի: Կէտ' ի դէպ է ունենալ սահմանուած բառեր որոնք կարենան հեռացնել խօսքի երկիրմութիւնները: Եւ որովհետեւ սովորական կիրառութիւնը ընդունած է արդէն յունարէնէն առնուած լադրիական և առլիիական բառերը, և յաճախ յունարէն բառերով կաղուաւած են դիտական հշդարանութիւնները, ևթէ անդէպ նկատենք մենք այ նոյնութեամբ դործածել զանոնք, զոնէ պէտք է վերև նշանակուած անոնց հայերէն հոմանիշները կամ ուրիշ նմաններ կիրարկենք անփոփոխ կերպով:

**208. ՊԱՇՏՈՆ ԱՍՏՈՒԱԾԱՑԻՒՆ.** Բայց պաշտամանց ձեւրով և բանաձեներով դրադելի պէտք է նկատի ունենանք պաշտամանց նպատակները և առարկաները: Ու բարձրադոյնէն անշուշն սկսելոյ, հարկ է որ խօսինք նաին այն պաշտամունքին մասին զոր կը մատուցանենք Աստուծոյ: Այսանց երկրայնթեան, պաշտամունք ըստուածել իր ամրողական, լրացեալ և զերապանց առումովր և աստիճանովր, բարձրեալն Աստուծոյ ժխտյն կը պատշաճէ: Ոչ ոք կը ժխտէ ասիկա, ևթէ անշուշն աստուածուրաց չէ, և մանաւանդ եթէ բուն լադրիական պաշտօնը կ'ուզնեք բռել:

Կրնանք նաև ըսել թէ պաշտօնը Աստուծոյ միայն զայել է, և Աստուծէ զատ ուրիշ ո՛չ մէկուն, և թէ արարածի ընծայուած պաշտօնը, ի՞նչ կերպով որ ալ լինի, անպատշաճ է:

Բայց երբ այսպէս կ'ըսենք, առլիիական պաշտօնը պէտք է զատենք բոլոր միւս պաշտօններէն, և լոկ պատիւ, մեծարանէ և յարգանք կունենք զայն:

**209. ՊԱՇՏՈՆ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱԾԱՆ.** Ինչ որ կ'ըսուի Աստուծոյ մասին, կ'ըսուի միանգամայն Երրորդութեան մասին, և անոր իւրաքանչիւր անձին մասին առանձնաբար՝ երբ

իւրաքանչիւր դէմքը առանձնաբար առնուի: Կը հետեւի արդէն Երրորդութեան խորհուրդն վերաբերմամբ մեր ըսածներէն թէ այս գարդապետութեան հիմը աարրեր չէ Աստուծոյ ժխտութենէն, և թէ ինչ որ քրիստոնէական յայտնութեան համեմատ կը դաւանինք Աստուծոյ մասին, համաձայն է անոր՝ զոր զիտենք Աստուծոյ մասին իմաստասիրական ճշմարտութեամբ:

**210. ՊԱՇՏՈՆ ՄԱՐԴԵՂՈՒԹԵԱԾԱՆ.** Երրորդութեան խորհուրդէն անցնելով մարդեղութեան խորհուրդին, և խօսելով Քրիստոսի ընծայելի պաշտամունքին մասին, հարկ է որ ըսենք թէ բացայացտ է Ս. Գրքին պատզամը՝ թէ արժան է Քրիստոսի ընծայել երկրպագութիւն, զի մետասան առաքեալներն ալ Գալիթոյ լիրան վրայ «Իրրի տեսին զնա, երկիր պազին նմա» (Մատթ. Խթ. 17), որովհետո իրեն համար ըսուած է «Երկիր պազցին նմա ամենայն հրեշտակը Աստուծոյ» (Երր. Ո. 6): Ու այս պատճառաա «Յանուան Յիսուսի Քրիստոսի ամենայն ծունը կրկնեցի երկնառաց և երկրաւորաց և սանդարամետականաց» (Փիլ. Բ. 10): Բայց թէ պաշտամունքներէն ո՛ր ընծայելի է Քրիստոսի, դժուար չէ ճրշդել, թէն զտնուեցան ոմանք որ իբրենց քմահանութեամբ մեկնեցին զայն, Նեստոր կ'ըսէր թէ «Յանուան ծածկեալին պիտի երկրպագէ տեսանելիքն»: Այլ ասիկա երկուոքի բաժնել էր երկրպագութիւնը: Նեստորի կը մատնան նաև անձնք որ Քրիստոսի ընծայուած երկրպագութեան մէջ կը բաժնեն բացարձակը յարարերականէն, և մարդկութիւնը սուկ յարարերականէն, և մարդկութիւնը կ'ուզեն պատուել: Նման կերպով կը խօսին նաև կարծէք Լատինները, երբ ըստինքան երկրպագութիւնը կը բաժնեն մասն ինքնան երկրպագութենէն: Մէնք հաստատոն կենանք միաւորուկան գարդապետութեան վրայ և մի Քրիստուը ճանանանք միշտ իր անբաժանելի միաւորութեանը մէջ, և իրեն ընծայած մեր երկրրպագութիւնը երկուոքի չըաժնենք, որպէսդի ձայնակից շերենինք անոնց՝ որոնք, ըստ Աթանասի, կ'ըսեն. «Ո բաց ի մարմնոյդ, զի պաշտեսուք զեեց» (Թուղթ առ Ատելի փիս):

**211. ԽԱԶ ԵՒ ՊԱՏԿԵՐ. Վերև յառաջ բեր-**

ուսած Պօղոսի խօսքերուն մէջ տեսանք Քրիստոսի անունը երկրպագելի բոլոր երկնի և երկրի, և նոյնիսկ դժոխոց արարածներէն (Փիլ. Բ 10): Ենորհալի, իրրի բացատրութիւն այդ խօսքերուն, կ'ըսէ թէ անունը ոչ այլ ինչ է բայց եթէ ձայն որ ականջներուն կու տայ նշանակուած իրին զայտութիւնը և էութիւնը: Այդ անունին համանման է, կ'ըսէ, պատկերն ալ, որովհետ այս ալ ձև մըն է որ կու տայ նշանակուած իրին զայտութիւնը և էութիւնը կ'արթնանէ, այս զատճառաւ: Քրիստոսի ընծայուած պաշտամունքին համանման պաշտամունք կ'ընծայուի նաև Խաչին և փրկչական պատկերին: Սակայն երբ խաչը կը պաշտօնէ, եթէ բուն խկ այն խաչափայտն է որուն վրայ բնեառեցաւ Քրիստոս, և կամ նոյն խաչափայտն նշխար մըն է և կամ անոր նմանութեամբ նորակերտուած մը, մըշա ստոյդ է թէ ընկառուած ընկալ խաչը տեսանելով, ոչ իրրի նիւթին, այլ անոր վրայ եղած աներելոյթին էր որ պաշտօն կը մատուցանելու: այսպէս և փրկչական պատկերին ոչ թէ նիւթին և ներկերուն, այլ Քրիստոսի, որ է պատկեր աներելոյթ Հօր Աստծոյ, կ'երկրպագենք»—Ենորհալի: Բայ այսը ուրեմն, խաչին և փրկչական պատկերին ընծայուած պաշտօնը ուղղուած է ոչ թէ խաչին կամ պատկերին նիւթին, այլ միայն և միշտ նշանակուած իրին, այսինքն Քրիստոսին, որուն զայտութիւնը և էութիւնը կը զարթուցանն անոնք մեր մէջ, արտաքին ըլդ զայտութեան ներքին միջնորդով:

212. ԽԱՉԵՐՈՒ ԵՒ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՒ Օ-ԾՈՒՄԸ. Զեռակերտ խաչերուն համար մեր եկեղեցին հաստատուն կանոնն է օծել զանոնք Ս. Միւռոնիվ և յետոյ գործածել իրրի նշան պաշտամունքի: «Զի եթէ ոք խաչ արացէ փայտեայ կամ յինչ և ից նիւթոյ և ոչ տացէ քահանային օրնել և օծանել զնս և միւռոնը սրբել, ոչ է պարա զնս ի պատուի ընդունիլ և երկրպագութիւն մատուցանել» (Օձնեցի): Որովհետև երբ լոկ չօրհնուած նիւթին երկրպագութիւն մատուցուի, այն տեսն աշխարհի նկարակերտութեանց կամ ուրիշ նիւթերու մէջ եղած որևէ քառակուսի ձև

պէտք է երկրպագելի ըլլայ (Ենորհալի): Խակ Ս. Միւռոնը թէն ըստինքեան պաշտելի նիւթ չէ, բայց նուիրական միջնորդ և հաստատուն նշանակ մըն է, որով հասարակ իրաց կարգէն և մարմնաւոր տարագով և նիւթով եղած բան մը կը զանազանուի կիրառութեամբ և նշանակութեամբ, և յատկապէս կ'որոշուի հոգուն նշանակութեամբ: Ու ասիկա շատ ալ պատշաճ բան մըն է, զի ինչպէս պաշտամունքին պաշտամնան կ'օծուի, նոյնպէս և պէտք է օծուին պաշտամունքին գործիք եղած առարկաներու ու պատասխանը: Եթէ մէկը ուղէ բարել թէ օծումը կրնայ աւելորդպապալութեան կարծիքներ գրգուե, կարծել տալով ուամիկին թէ իրական փոփոխութիւն մը կը կատարուի նրաշանակներուն մէջ, աւելի ճահապոյն կ'երեւի ի հակառակէն բան թէ նիւթական միջնորդներով գորացած կրօնական պաշտամանց րդգացումը պէտք չէ շատ տարածուի խարութիւն չդրուած նշանակներու կիրառութեամբ, որ շատ աւելի վլաստակար աւելորդպապաշտութիւն մըն է: Եւ ի՞նչ կարելի է խորհրդի և իմաստութեամբ հնարել որպէսի թոյլ չարուի որ տգէտները չգեղծանեն և գիացողները չխժանեն:

213. ՊԱՇՏՈՆ ՍՐԲՈՑ. Կարգը եկաւ այժմ խօսելու սրբոց ընծայուած պաշտամունքին վրայ: Պաշտօն բառով հոս պէտք է հասկնաւ առուիլականը: և եթէ պաշտօն բառը, որ իր հասարակ առումին մէջ ոչինչ ունի ծանր, զի կը նշանակէ պարզապէս ծառայութիւն, ծանըր թուի ուժանց, հնար է անոր տեղ զործածել յարգութիւն բառը: թէն, ըստ մեր հասկացողութեան, աւելի ծանր է յարգութիւն բառը, որ ցոյց կու տայ բնական էակին բարոյական մէկ զործը քան պաշտօնը՝ որ պարզապէս ցոյց կու տայ նիւթական և արտաքին գործ:

Կը նկատենք զարձեալ թէ պաշտամանց կամ յարգութեանց արտաքին ձևերը բատինքեան անպատակ են, և իրենց սեփական արժեքներուն մէջ իսկական տարրերութիւն կամ էական առաւելութիւն չունին, այլ ամէն ինչ կախուած է առումէն և զիտումէն, որով իւ-

րաքանչեւր անձ կամ ընդհանուր սովորոյթ կապուած է անոնց : Այսպէս, ո՞չ ճրագր սուրբին է քան խունկիր, և ո՞չ ծնրադրութիւնը աւելի բարձր՝ քան բազկատարածութիւնը, և այլին : Թե ապաքէն պաշտամանց և յարգութեանց գանազան ձեւերուն մէջ գլուխր ծածկելիր կամ կօշիկր ոտքէն հանելիր պատռւելանպատռւել է փոխաղարձարար զանազան ազգաց սովորութիւններուն համեմատ : Ազաւ ուրիմ ոչ մէկ ինդիր կրնայ ըլլայ բառերու, ձեւերու, զործերու և նշաններու մասին, զորրս կարելի է ընծայել ի պատի սրբոց բայց միշտ պէտք է ցոյց տալ թէ պաշտօնը զոր Քրիստոսի Եկեղեցին կ'ընծայէ Հրեշտակաց, արդարներուն և սրբոց զերծ է կոռապաշտական զեղծմանց մեղադրանքէն :

**214. ՍՈՒՐԲԵՐ ԵԽ ՀԲԵՇԱԿԱՆԵՐ.** Միասին նկատի կ'առնենք սուրբերը և Հրեշտակները, այսինքն արտաքոյ աշխարհին եղած անմարմին բանաւոր էտիկները և մարդկէն անոնք՝ որոնք հասարակաց կարծեաց համեմատ ուզգութեամբ և արդարութեամբ, և կամ կատարեալ ասպարհարութեամբ մեկնեցան այս աշխարհէն, իբենց կեանքը անցրնելով կամ պատարագելով Քրիստոսի հաւատքին և Եկեղեցին վրայ և հաւատացելոց օգտին : Անոնք որ ի բնէ աննիթ են, կամ որոնք նիւթականէն մերկացան, կընան այս տեսակտով մէկ գիծի վրայ համարուի :

Սուրբ Գիրքը ոչ սակաւ օրինակներ ունի Հրեշտակաց ընծայուած երկրպագութեան : Թողունք Արրահամի և Ղովտի ըրածները զորրս յիշեցինք զերին, որովհետեւ թերես երկրպագած ատեն զանոնք չէին ճանչնար իբրև Հրեշտակներ, այլ իբրև պատռւաւոր պանդուխտներ՝ մեծարանքի և սպասարկութեան արժանի, և լոկ մարդկային պատի է որ կ'ընծայէին, ժամանակի ձեւերուն համե-

մատ : Բազաամ երբ տեսաւ Հրեշտակը, «անկեալի ի վերայ երեսաց իւրոց, երկիր եպագ նրանք» (Թիւ. իթ 31) : Դիտելի է որ ըստ Ս. Գըրոց, «երաց Տէր զայս բազումա» այդպէս ընելու համար : Յեսու տեսնելով սուսերամերկ ժարդը, և լսելով թէ գորավար է ի զօրու Ծեառն, այսինքն երկնային զօրաց, «անկաւ ի վերայ երեսաց իւրոց և երկիր եպագ» (Յես. ե 15). ու Սոմնացի կինը, նդիսէի ձեռորդի իր որդւոյն յարութիւն առնելին ետքը, զիտեալով թէ Աստուծոյ մարդ է ան, անկաւ առ սոս նորա և երկիր եպագ նման յերկիր» (Դ Թագ. Դ 37) : Երրորդ յիսնապետը երբ մարդ զրկեց Եղիսան մերրակալելու համար, և տեսաւ առաջիններուն պատռուիլու, «անկաւ ի վերայ ծնկաց իւրոց առաջի Եղիսայի և աղաքէր զնաց, զայն կոշելով «այրու Աստուծոյ» (Դ Թագ. Ա 13) : Աստուծ ինքնին Հրամայեց պատիի արժանի նկատել Հրեշտակները :

**215. ՆՇԱՆԱԿ ՊԱՏԻՈՑ.** Եկեղեցւոյ հին յիշատակարաններուն մէջ յաճախ կը հանդիպինք սուրբերու ընծայուած պատռու և մեծարանց նշաններու, ինչպէս են հանդէսով անոնց մահուան կամ նահատակութեան տարեդարձները կատարել, պատռել անոնց յիշատակը պատռոյն որոշ օրերուն մէջ, չինել անոնց զերեզմաններուն վրայ կամ մօտր պաշտամունքի վայրեր որոնք կը կոչուին վըկայարան կամ մարտիրոսարան, խորհրդական և բարեպաշտական պատարագներ մատուցանել անոնց վկայարաններուն մէջ յանոն վայրին կամ սուրբին : Ու այս այնչափ յայտնի է որ նախնի սուրբ հայրերու եկեղեցական մատենագրութեան գիրքերուն մէջ անպակաս են գովզութեան խօսքեր, ներրողական ճառեր և վկայարանութիւններ՝ նուիրուած անոնց յիշատակին :

(Նար. 21)

ՄԱՂԱՔԻԿ ԱՐՔԵՊՈ. ՕՐՄԱՆՆԵԱՆ

## ԿՐՈՆԱԿԱՆ

### Պ Ա Յ Ք Ը

**ՄԵծ Պահքի եօթ շաբաթները իրենց վախճանին կը ժօտենան, որոնք հոգեւոր մտամփոփումի և կրօնական խոկումի առիթը կ'ընծայեն հաւատացեալին, տեսնելու իր մարմինը, բայց մանաւանդ հոգին:**

Կեանքը մեղքին դէմ կուի մըն է, պայքար մը նիւթին և խորհուրդին միջն, կիրքերու և առաջինութիւններու միջն : Մարդը չի կրնար հրաժարի Աստուծմէ, չի կրնար նոյնաէս հրաժարիլ մեղքէն : Ան կը սիրէ իր մարմինը, կը սիրէ նաև իր հոգին : Անոնք թշնամիներ չեն իրարու, բայց նոյն ուղիէն չեն ընթանար : Պահքը անոնց ներդաշնակութեան, համերաշնութեան նպաստող առիթն է :

Այս հաւասարակշռութիւնը դժուար է կեանքին մէջ : Մարդիկ կը ձըգտին հոգեապաշտութեան և կը գառնան ճգնազգեաց : Կ'ուզեն բացուի կեանքի ուրախութիւններուն, կը սուզուին աշխարհիկ հաճոյքներու մէջ : Կ'ուզեն հեռու մնալ մեղքէն, կ'իյան օրէնքի բռնութեան տակ : Կը նախընտրեն աղատութիւն, կ'երթան անկարգութեան : Մարդուն համար շատ դժուար է պահէլ այս հաւասարակշռութիւն :

Զենք վերլուծեր պահքը, բաներ կան որոնց իրագրոծումն է որ արժէք ունի . կը գոհանանք միայն ըսելով որ Եկեղեցոյ Հայրերը մեր օրերու թժէկներուն չափ կը հասկնային մարմինէն, ինչպէս հոգին : Հոգին բուժել մարմնի միջոցաւ, աւելին՝ մարմինը կազմակերպել որպէսսի հոգիին ծաղկաւորման, ճիւղաւորման ասպարէզ բացուի : Սանձել մարմինը, ասպարէզ տալու հոգիին :

Պահքը կ'սկսի անշուշտ սեղաններու ժուժկալութենէն և մարմնական սանձումներէն, բարձրանալու համար հոգեկան տիսիպլինի մը, հոգեկան պահքի մը : Բոլոր մեծ ձեռնարկուները, կ'զգան պէտքը այդ կերպոնացման :

Հին ատեն ճգնաւորները անապատ կը վազէին ոչ միայն փախչելու աշխարհի չարէն, այլ համախմբելու իրենց հոգեկան ուժերը իրենց հետապնդած նպատակին ի ինդիր : Եթէ կ'ենթարկէին իրենց մարմինը զրկանքներու և շատ յաճախ խոշտանգումներու, վասնզի կ'զգային թէ իրենց հոգին անհանգիստ է, երկուութեան պայքար կար իրենց ներսը և կ'ուզէր միութեան մը բերել :

Մրցանքի վազք մըն է հաւատացեալին կեանքը, և ասպարէզին ծայրը ան պէտք չէ աեսնէ զինքը իրենց քաշող ունէ ուրիշ պատկեր՝ բայց Քրիստոսի լուսափայլ դէմքէն : Անոր մտածումը, անոր մեծութիւնը միայն պէտք է ուղղութիւն տան հաւատացեալի կեանքի տնտեսութեան :

Պահքը իր արտաքին ձևին մէջ պարտադրանք և արարմունք է, խորքին մէջ սակայն պատրաստութիւն է Աստուծոյ : Այս կերպով ան կը դառնայ կրօնական միջոց և հոգեկան փրկութեան առիթ : Այսօր պահքը չի պահուիր իր վա-

յեւ լրջութեամբ, վասնզի մեզի կը պակսի զոհողութեանց այն կշիռը որ մեզմէ կը պահանջուի: Քիչ չէ թիւը անոնց՝ որոնք իրենց ակուաներով կը փորեն իրենց գերեզմանը: Անոնց՝ որոնք մարմնական և հոդեկան զոհերն են իրենց համայնքներուն:

Ժուժկալութիւնը մեծապոյն վկայականն է առողջութեան: Ժուժկալները միայն աշխատանքը են, վասնզի շուայա և ցորք կենցազ ունեցողները ծոյլ և անպէտ են: Հոգիին ինչպէս մարդինին ուժը պտուղն է այս առաջինութեան: Անով է որ մարդ իր մէջ կ'ստեղծէ պիրկ բայց քաղցր զօրութիւն մը որով կ'իշիէ հոգիի բոլոր բարի բերումներուն և յախուռն ու անկարդ հակոմմաներուն վրայ, և տէր կ'ըլլայ իր անձին: Խնդրինքին աէրն է այն միայն որ կրնայ սանձ դնել իր հաճոյքներուն և կիրքերուն և չթողուլ որ իր մէջ հոգեկան կեանքը բարձրացնող ազնուազոյն յոյզերը ստորագասուին ստոր և գուեհիկ միասումներու: Մարմնական ցանկութիւններու սանձարձակութիւնները ոչ միայն Փիզիքապէս և հոգեպէս կը քանդեն ենթական, այլ և անարդանք են Աստուծոյ, ուրուն պատկերն է մարգը:

Պահքերը, ըստուած է, զիստ միտքին և սուրբ սիրտին պահապաններն են, և հոս է կրօնական նշանակութիւնը Մեծ պահքին և բոյոր պահքերուն: Մեծ պահքին մարդիկ առասարակ կը հեռանան առօրեայ հոգերէն և մտածումներէն, ինքինքնին կարենալ տեսնելու համար: Խնդրինքը տեսնել ուրիշ բան չէ, բայց զէմ առ զէմ զալ իր մեղքին: Այդ է պատճառ անչուշտ որ իրական պահեցները տրտում կ'ըլլան, տրտութիւն մը սակայն որ կը բխի ինքնաճանաշման և մեղքը արժենորելու զգացումէն: Վասնզի ով որ իր մեղքը կ'արժենորէ, ինքինքն է որ կը գնահատէ:

Եօթիր եօթնեակները որոնք խորհուրդով և մտածումով Մեծ պահքը կը հիւսեն, կազմելով վարագոյնները մարդկային հոգիի փրկագործութեան սրամային, կը հիացնեն զմեկ հոգիի նկատմամբ ունեցած մեր նախնեաց փոյթին և նախատեսութեան առջին: «Բարեկենդանէն սկսեալ, որ մարդկային ծագումին քրիստոնէական վաղափարը կը պանծացնէ, մինչև Ալրտաքսման», «Անառակին», «Տնտեսին», «Դատաւորին», «Գալստանան» և «Զարչարանաց» եօթնեակները, որոնք կ'երեսեն խորհրդաւորապէս մարդկային կեանքի և բերումներու զլխաւոր փուլերը՝ մէկը միւսէն աւելի գեղեցիկ են և տպաւորիչ:

Եթէ Բարեկենդանը ակնարկութիւնն է մարդուն երբեմնի երջանիկ կեանքին և իր աստուածային ծագումին, Արտաքսման կիրակին խորհրդապատկերումն է իր գայթումին, և Աստուծմէ, իր երջանկութեան կայանէն, հեռացումին Սակայն մարդը որ աստուածայինը ունի իր մէջ ու իր հետ, այսաւերան մէջն անզամ փաստը կուտայ իր մէծ ծագումին, ունենալով միշտ կարօտը իր կորսուած գերազոյն վիճակին: Անառակի կիրակին այդ սրտառուէ խորհուրդին գարագոյրն է որ կը բանայ մեզի: Մարդ իր ամէնէն մեղաւոր թարմափումներուն մէջն իսկ, կրնայ Աստուծոյ երթալ, Եթէ իր մէջ շիշած չէ փրկութեան իջջը: Քրիստոնէին համար ամէնէն աններելի բանը անյօւսութիւնն է, որ ուրիշ բան չէ բայց մեղքին դէմ կոռուլ չկարենալու վիճակը: Անառակի պատկերը, մեղքի դէմ մղուած և զայն պարտութեան մատնող գերագոյն իրողութեան արտայալութիւնն է, և մարդկային հոգիին համար չկայ աւելի կադդուրիշ զգացում, քան ինչ որ կը բխի անոր խորհրդաւորած զաղափարէն:

Այդ պայքարին մէկ ուրիշ զիճակն է մարդուն մէջ, Տնտեսին առակր,

ուր նիւթը կ'օգտագործուի ի նպաստ սպիրին, այնպիսի հաւասարակշռութեամբ և իմաստութեամբ, որ Աստուծոյ գործակից մարդուն միայն անկ է ժտածել ու բնել: Անկանոնութեան ծնունդն է միշտ մեղքը, անոր զէմ կոռելու լուածոյն զէնքերն են իմաստութիւն և կամք, զոր այնքան ճարտարօրէն գործածեց արնաւելու իր խախտած ապագան և պատիւը վերականգնելու: Եւ առաջին մենք կը յաղթենք, եթէ մեղք հետ ունենանք միշտ Աստուծոյ խորհուրդը, լոյսը, այն մութ բաւիդին մէջ որ աշխարհն է: Այդ լոյսը կարելի է անչէջ պահել հոգիին խորր՝ Աստուծոյ հետ տեսական հաղորդակցութեան այն եղանակով, զոր ազօթով միայն կարելի՞ն ունենալ: Եւ Կիրակիի, Դատաւորի առակին մէջ նկարագրուած ազօթաւոր կինը այդ խորհուրդն է որ կ'անձնաւորէ:

Ու վերջապէս իր աստուծային երջանկութիւնը կորսնցնելէ վերջ, երբ մեղաւոր մարդոր իր արթուն պատուիրանապահութեամբ և հոգեկոր կեանքի րդպատ անտեսութեամբ կը յաջողի անշեղ ուղղութեան մը վրայ հաստատել իր բարյականը, շուտով կ'սկսի ներքին վերանորոգումի վիճակը: Փրկութեան քաղցր յոյսը կ'այցելէ իրեն, և ժօտաւորութեան, Գալուստի այդ զգացումը, հետեարար, հրճուանք միայն կրնայ ազգել:

Իսկ եօթներորդ կամ վերջին, այսինքն աւագ եօթնեակը կը ցուցադրէ աշխարհի փորձութեանց յաղթած, հաւասաքով, յոյսով և սիրով զօրացած մարդուն՝ այսինքն ճշմարիտ քրիստոնէին անցքը Քրիստոսի չարչարանքներու և մահուան արհաւիրքներու մէջն՝ զէպի անոր յարութեան փառքը, որ պսակն է փրկութեան խորհուրդին:

Եթէ ճիշդ է թէ մարդուն կեանքը անվերջ կորի մրն է նիւթական դուացումներու և բարձրագոյն իտիւալներու միջն, և թէ ան չի կրնար Հրամարի ոչ իր մեղքերէն և ոչ ալ Աստուծմէ, ինչպէս պէտք է կազմակերպել մարդու, որ ան կարենայ գրաւել արարչագործութեան կարգին մէջ իր բացառիկ տեղը:

Այս տեսակիտով միակ ու բարձրագոյն տիպարը որ մեղք կը ներկայանայ մեր Տէրն է, որուն նկարագրին զեղեցկութիւնն ու կատարելութիւնը առաջն նայուած քով վատահութիւն կը ներշնչէ մեղք: Սակայն Եթէ խոր խելամտութեամբ մը հետեւինք Յիսուսի կեանքին, պիտի տեսնենք թէ առանց բարոյական բուռն պայքարի չի որ Ան հասաւ իր նկարագրի ամրողական կազմութեան: Մարդ մը որ կուռեցաւ ամէնէն հզօր և անդիմադրելի փորձութիւններու զէմ, անապատի փորձութեանէն սկսեալ մինչև Գեթսեմանի խոռվիքը, ուր իր ճակտին վրայ փայլեցան քրտինքի և արիւնի կայլակներ:

Մովսէս որ ակնածելի նախահայրն է Հրէական կրօնքին և Օրէնքին, համաձայն Ա. Գրքին մեղանշած է ու չի կրցած Աւետեաց երկիրը մտնել: Գուրանը կը Հրամայէ նոյնիսկ Մուհամմէտին: որ իր մեղքերուն համար թողութիւն խնդրէ: Կոմփիւկիոսի և Պուտայի հետեւորներ բնաւ կատարեալ չեն դաւանած կրօնի իրենց Հիմնադիրները: Յիսուսի կատարելութիւնը չի կայանար միայն Անոր մեղք գործելու անկարողութեանը համար, այլ իր յաղթելու կարողութեանը մէջ: Մեծ փորձութիւնները կը յարձակին յաճախ մեծ կարելիութիւններ ունեցողներուն վրայ, վասնդի մենք մեր ամէնէն զօրաւոր տեղերէն խոցելի ենք:

Այսօր պահեք չի պահուիր, որովհետեւ մեղք կը պակսի կարելի զոհութիւնը: Մենք պատիկցուցած ենք սահմանները մեր յարացոյցներուն, աւելին՝ երբ չենք կրնար հասնիլ անոնց, մեղք կը քաշենք զանոնք, մեր չափին իջե-

շնելու մեզ իրենց տանող լուսաստղը : Ով որ կր փոքրէ իր իտէալր , յուսահատէ ինքինքին : Այսօր մարգոց հոգիներուն մէջ ճակատազբապաշտութիւն մը կայ , որ ուրիշ բան չէ բայց մեռած մեր մեր անցեալին , մեր ներկային և ապագային : Աւելին , այդ հոգեվիճակը կ'արգիէ մեզ ուղիղ կերպով զիմաւորելու մեր ճակատագիրը : Մեծ հոգիները վեր կը նային , ատոր գերազոյն տիպարն է Արրահամբ , իրեն հաւատոյ հայր և ասպետ : Տարիներով սպասեց իր յոյսի պատուղին և ունեցաւ զայն : Օր մըն ալ հրամայուեցաւ իրեն որ զոհէ իր զաւակը . Արրահամբ յօժարամտօրէն հնազանդեցաւ իրեն եկող ձայնին : Սակայն հաւատոյ հայրը կը հաւատար իրեն եղած խսուումին նոյնիսկ անկարելիութեան սահմանին մէջ : Որովհետեւ ով որ կը հաւատայ կարելիին , իմաստուն է , ով որ կը նայի յաւիտենականին՝ մեծ է , սակայն ով որ կրնայ յուսաւ անկարելիին , մեծագոյնն է մարդոց որդիներուն : Արրահամբ կը հաւատար անկարելիին , որ մեծագոյն կարելին է , առա ճշմարտապանցութիւնը հաւատքին :

Ամէն մարդ մեծ է համաձայն իր սիրած առարկային : Ով որ ինքինքը կը սիրէ ինքինքը կ'արժէ , ով որ ուրիշները կը սիրէ , մեծ է իր նուրիումով , սակայն ամէնին մեծը ան է որ զիստուած կը պաշտէ : Արրահամբ չնորհիւ իր մեծ հաւատքին մենամարտի ելաւ . Աստուծոյ զէմ և ազատագրեց իր զաւակը :

Կեանքը աւելի է քան ինչ որ կը կարծենք . Փիղիքական կեանքին աւելի բարձր հոգիկան կեանք մը կայ , մօս Աստուծոյ , որ չի սահմանուիր չնշելու , դորձելու և մտածելու մէջ միայն : Աստուծ մեր էութեան բարձրագոյն սահմանին վրայ է , անոր հասնելով մեր մարդկայինը իր լուսթեան կը հասնի : Մեր մէջ պաշտումի և սիրոյ զզայարանք մը կայ , մենք չենք կրնար գոհանալ նիւթական և առօրեայ անհրաժեշտութիւններով և զոհացումներով : Կատարելութեան զաղախարր մարդուն մէջ ուրիշ բան չէ բայց այդ զզացումին և ձգտումին արտայայտութիւնը : Վայ անոր որ կրնայ ընդարձանալ նիւթական գոհացումներու մէջ , առանց որոնելու այս բարձրագոյնը :

Մեր բարձրագոյն ճակատագրին հողը առարկայ է մեր մտքին . Մեծ պահքը այս մտածումի վերապրումի չըջանն է , բարձրացնելու մարդը իր փառքին : Ի վերջոյ պէտք է ընդունիլ թէ մարդը երկինքին երկիր ինկած հրեշտակ մըն է , որ միշտ երկինքը կ'երաղէ :

Ե.



## ԱՍՏՈՒԱԺԱՅԻՆ ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԻՒՆ

«Ընկեա ի Տէր զիօգս քո , և նա  
կերակրէ զիեզ» .

Աղմ. ԾԻ. 23

**Յիսուսի ուսուցումներուն Մէջ կարելոր  
տէղ մը կը դրաւէ աստուածային նախախնա-  
մութեան վարդապետութիւնը :**

Աստուած չի զոհանար լոկ ստեղծագոր-  
ծելով , այլ կը շարունակէ խնամել իր արա-  
րածները : Անոր ինամբը կը տարածուի ոչ  
միայն մարդոց , այլ մինչև սիկ ճնշուկներու  
վրայ , և ծառերու տերեներու անդամ կը վա-  
յելին անոր բարեխնած տեսութիւնը :

Արդ , մեր նեղութեան օրերուն քիչ որր-  
ոտպնում չէ որ Կ'ընծայէ մնաի տէրունա-  
կան սփոփարար պատզամը՝ «Ընկեա ի Տէր  
զիոզ քո , և նա կերակրէ զիեզ» :

Ի՞նչ պիտի ուստենք վազը : Հարցում մը՝  
որ կը ցցուի ամէն մարդու առն : Չուները  
սարսափով կը խորհի անօթութեան պատճա-  
ռելիք տանձանքին զիմաց : Խսկ ուսնուրը դրժ-  
ուարութիւն կը զանէ կատարելու համար  
ոնտրութիւն մը զանազան համագաներու  
միջն , որոնց տենչանքը կը տանչէ զինք : Մէ-  
կը կը տառապի ուտելիքի սակաւութեան  
պատճառաւ , միւսը կը տազնապի ուտելիքնե-  
րու աստուածեան երեսն :

Ուր է աստուածային նախախնամու-  
թիւնը որ պիտի հոզար ամէնուն համար հար-  
կաւոր սնունդի պէտքը : Ան շանկ՝ միջոցը  
հայթայթելու այնքան պարէն որ բաւական  
ըլլայ բոլորին :

Անկասկած թերութիւնը նախախնամու-  
թեան չէ որ կը պատկանի , այլ այն տիտոր  
կացութեան , որ ստեղծուած է մարդոց խսկ  
կողմէ : Մէկը շահմարանած է իրեն պէտք ե-  
ղածէն շատ աւելին , և յաճախ յումպէտու կը

գատնէ իր ունեցածը , իսկ միւսը զրկուած է  
իրեն համար անհրաժեշտ սակաւ սնունդէն :  
Թերութիւնը կը գտնուի բաշխումի անհաւա-  
սարութեան մէջ . անհաւասարութիւն՝ որ  
զերծ չէ անարդարութեան մեղադրանքն :

Այդ անարդարութիւնը յաճախ պատճառ  
կը գտնայ որ մէկ կողմէն ազքարը սնունդի  
պահասութեան հնատանքով տկարանայ և  
մէունի կանխահասորէն , և միւս կողմէն հա-  
րուուր շափէն աւելի շատ ուտելիք հրան-  
դանայ և մեռնի տարածամ : Եթէ արգար ու  
հաւասարակիր սնուցման դրութիւն մը որ-  
ուերուած բրյար՝ ոչ շքաւորը անօթի պիտի  
մէունէր , ոչ ալ փարթամը որկրամուլութեան  
դու պիտի գառնար :

Արգարե որքան աստուածային նախախ-  
նամութիւնը տնօրինուած է երիխային իշխա-  
նութեան հոգմէ , նոյնքան աւ հարկ է որ ըր-  
նութեան բնծայած բարիքները իմաստու-  
թեամբ տնտեսուին երիխաւոր իշխանութիւն-  
ներէ , և մարգուն կողմէ զործադրուած ա-  
նորդաբութեան և անհաւասարութեան յան-  
ցանքը զարմանուի մարդու խսկ մեռքով : Այն  
տուն ամէն ոք իր բաւարար բաժինը ստանա-  
լով պիտի ապրէր բնութեան կանոններուն  
համաձայն և պիտի կը գունութիւն տալ  
աստուածային նախախնամութեան , անոր ա-  
ստուածարդի չնորհներուն և իմաստուն անօ-  
րունութեան համար :

Աւրեմն հարկ է բակէ թէ այսօր մարդկու-  
թիւնը կը գտնուի կարենոր հրամայականի մը  
առջնէ : Ան իր զիտական անհաւատալի նուա-  
ճումներուն առընթեր պէտք է ցոյց տայ հա-  
մազաւասուան բարոյական զարգացում և  
զդացողութիւն , և զդեսնէ այժմու անարդար  
դութեան ծնունդը եղող դատապարտելի հր-  
բէքը որ կը կոչուի անօթութիւն :

ՆՈՐԱՅԻ ԱՐՔԵՊՈ.

## ԱՎԱՌԻՆՑԻՆԵՐԻ ՊԱՐԾ

Սասունցի Ափօ Գալուստի լիշտակին...

Դու ծանօ՞ր ես Աշճակ գիղին,  
Ուր ծիրանն է հասնում ճիղին.  
Ուր կտրին չիրն է քաղցրանում,  
Ուր հոտը սարն է բարձրանում.  
Ուր, փէշի տակ Արազածի,  
Տան կտորին նստած հացի,  
Զայն են տալիս իրար հերթով  
Եւ գիղամէջ գալիս խմբով.  
Աղջիկները՝ կարմիր հագած,  
Տղաները՝ փուշի կապած.  
Երբ գուտնան իր ձայնը զում՝  
Դափի բերնից խօսքը խլում,  
Աշճակ գիղից ճիւր է կանչում  
Ճղարշիկին ու Աղաքուն,  
Կաթնաղբիւրին, Դաւաշէնին,  
Դրինդին ու Սասնաշէնին,  
Թէ՝ հերից է հնձե՛նք, վարե՛նք,  
Եւէք Սասնայ պա՛րը պարենք:

...Թող Սասունն իր պարը պարի,  
Խնե դու դեռ մի՛ ծափահարի.  
Այլ հասւացիր, թէ այս պարով՝  
Մերթ Սնդոկից գորի տալով,  
Մերթ գաղթելով սար ու քարով,  
Մէկ խնդապով ու տաս լալով,  
Սասունը քեզ ի՛նչ է ասում...

Հեյ վա՛ն, Աշճակ տեսած լաօ,  
Թէ տեսնէիր մի օր Սասուն...  
Սասնայ սարեր՝ մէջ ամպերուն,  
Սասնայ ջրեր՝ մէջ վիրերուն,  
Սմէն սարին՝ մի վանք ու բերդ,  
Սմէն ջրին՝ ջաղացի հերթ,  
Սմէն քարից ընկը էր գալիս,  
Աչեն ուր թերուէր՝ դո՛ւր էր գալիս.  
Երկնուց իջնում էր մանանա՛...

Ի՞նչ մանանա՝ լաւ մահանա՝, -  
Որ Սասունցի հարս ու աղջկէ,  
Դաշտ իշնէին խունջիկ-մունջիկ.  
Գազպայի տեղ՝ նա՛զ շաղէին,  
Հօնադ տղի սիրտ դատէին.  
Որ հայրական հին տաճ կողքին,  
Անտառի մէջ, ժայռի ճեղքին,  
Մի նոր ըողտիկ աւելանար,  
Մի խորոտիկ հա՛րս մայրանար,  
Նոր օրօրո՛ց գնար ու գար.  
Բարին լինէ՛ր, շարը՝ չգա՛ր...

Հեյ վա՛խ, Սասնայ բարձրիկ սարեր,  
Հեյ վա՛խ, Սասնայ քաղցրիկ ձորեր.  
Զուտնան էսօր թէ նուագէր՝  
Եկող ամրան կ'արձագանգէր  
Սասնայ ամէն թուփ ու քարից.  
Ու թէ տհոլն էսօր թնդար,  
Մինչև աշոն, դեռ անդադար,  
Ամէն գիշեր ու ամէն օր  
Ժեռ-ժեռ քարեր Անդրկ սարից  
Յա՛ծ կ'իշնէին գլոր-գլոր...  
Բարին լինէ՛ր, շարը չգա՛ր...

Բայց թէ լինես միայն մի բուռ,  
Դու սի՛րտ լինես, չորս կողմը՝ քա՛ր,  
Չարը՝ հզօր, իսկ դու՝ տկար,  
Այօ՛ք անես թէ խաչհամբո՛յր,  
Չարի ձեռքից պրծում չկա՛յ...  
Եւ դեռ «գայթէք յոնիրն ի կախ»,  
Եւ դեռ հարրած՝ փեսայ, աներ,  
Մինչև մերիկն ասէր «հէյ վա՛խ»,  
Փեսան գոմից թերդա՛ն հանէր,  
Զուտնան շոլում ընկած մնաց,  
Դափը՝ գլոր-գլոր գնաց,  
Եւ ով ովզ էր՝ սարերն ընկած,  
Գերանդու տեղ թերդան գոկած,  
Մէկ ապրելով, տաս մեռնելով,  
Մէկ զարկելով, տաս զարկուելով,  
Թողին Սասնայ զմուխտ սարեր,  
Դաւթի շաղացն ու իր քարեր,  
Եկան Ռուսի հողը հասան,  
Բայց, էստե՛ղ էլ կոիւ տեսան,

Տեսան աւեր ու կոտորած,  
Եւ ի՞նչ մնաց.... մի Սասնաշէն,  
Մի Բազմաբերդ ու Դալքաշէն,  
Մի Կաթնաղիկ ու Աղաքշի,  
Մի խեղճ Իրինդ ու Ծղարշիկ  
Եւ մի Աշնակ՝ չոլում կորա՛ծ...

Հեյ վա՛ն, Սշոյ սարսո՛տ հողեր,  
Դէ՛, քա՛ր մաղի, որ հո՛ղ դառնայ.  
Հեյ վա՛ն, Սասնայ զուլա՛լ ջրեր,  
Դէ՛, մի՛ւ հալի, որ ջո՛կ դառնայ.  
Հեյ Աշնակայ չոլ ու դոեր՝  
Աշնակն ինչպէ՞ն Սասուն դառնայ...

Եկան, դրին քարը քարին՝  
Դուշմանն եկաւ խառնեց իրար.  
Ուզ ու մեռել ջոկ-ջոկ արին՝  
Դուշմանն եկաւ խառնեց իրար.  
Մինչև արինը թանձրացաւ,  
Կարմիր գոյնի դրօշ դարձաւ,  
Մինչև մանգաղն եկաւ հողից,  
Մուրճը պոկուեց սալի կողից,  
Ու երկուսն էլ, եղօր նման,  
Այդ դրօշի վրայ եկան  
Ու նոր արև ծագեց հողին,  
Հող վարողին, հող սիրողին:  
Մինչև նորից օճախ դրին՝  
Ծուխը սողաց.  
Մինչև նորից տաք թռնիրին  
Բոցը շողաց.  
Մինչև նորից, խունջիկ-մունջիկ,  
Դաշտ գնացին հարս ու աղջիկ,  
Որ աղցան ու սիրեխ քաղեն,  
Հօսաղ տղի սիրտը դաղեն,  
Հօր արտի մօտ նոր արտ վարեն,  
Արթիկ տուֆից նոր պատ շարեն,  
Մի նորելուկ հա՛րս մայրանայ,  
Մի նոր թռնիրի ծո՛լս բաղձրանայ,  
Նոր օրօրո՛ց գնայ ու գայ,  
Բարին՝ տնի՛, շարը չգա՛յ...

...Եւ երբ տեսան, էլ չարորդին  
Մօտ չի՛ զալիս,

Եւ երբ տեսան՝ էլ վառօդի  
Հոտ չի՝ գալիս, և երբ տեսան՝  
Էլ չի՝ թափում հողին արին,  
Եւ երբ տեսան՝  
Եկաւ աշուն, եկաւ գարուն,  
Առանց արի, կոտորածի,  
Բա՛ց արեցին սովորէն հացի,  
Զոտնէն խօսե՛ց բերանացի  
Եւ Արագած լերան գոգին  
Զարթնե՛ց կրկին Սասնայ ոգին...

Եւ Սասունը նորի՛ց պարեց,  
Ռուքը զարկեց, ծեռքով արեց,  
Եւ նոյն զուտնան, որ հնչում էր  
Հին տան բակում, հնչեց  
Հիմա ամէն գիւղում ու քաղաքում,  
Խակ տհուց, որ քարե՛ր էր պոկում սարից՝  
Ծափե՛ր պոկեց ամէն ազգից ու  
Աշխարհից...  
Պարե՛ց Սասունն, ու ողջ  
Աշխարհը հիացաւ,  
Պարե՛ց Սասունն, ու ողջ  
Աշխարհը հասկացաւ,  
Որ երբ նազում են աղջկներն ու նունում՝  
Սասնայ ձորից ջուր են բերում,  
Արտ քաղինանում.  
Երբ ուղի տակ տղաների հո՛ն է թնդում՝  
Հօտաղները Սասնայ սարում  
Գա՛լ են խեղդում.  
Երբ խննում՝ կարծես ամպրուա  
Պայչի սարում՝  
Այդ ոսո՛ն է նրանց գիւղերը պաշարում.  
Երբ միանում՝  
Բե՛րդ են դառնում շինուած քարից՝  
Այդ ոստիսին ե՛տ են քշում Անդրէ սարից.  
Խակ երբ ծեռքը ծեռքին զարկում,  
Ծա՛փ են տալիս՝  
Մահուան վիհից դէպի կեանքի  
Ա՛փ են գալիս...

Պարե՛ց Սասունն, ու ողջ աշխարհը հիացաւ,  
Պարե՛ց Սասունն, ու ողջ աշխարհը  
հասկացաւ,

ԳԵՐՐԳ ԷՄԻՆ

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՅԱԿՈԲ ԴՊԻՐ

(1616 — 1657)

**ԺԷ.** Դարբուն Կ. Պոլսոյ մէջ զործող երեւելիք գրիչներէն մին է Յակով Դպիր, որդի Պաղտասարի և Ռւսականէի, որ աւելի քան քառասուն տարի ծառայած է Հայ գրչութեան ասպարէցին մէջ, արտադրելով բազմաթիւ երկեր, որոնցմէ կրնանք յիշել մօս տանեակ մը, գասաւորելով բատ թուականի:

1.— Մաշտոց, օրինակած է 1616ին, Մելքոնի պատուէրով — Զեռ. Վենետիկի, թիւ 1115: Յիշ. ԺԷ. Դարի, Ա. Հատոր, թիւ 794:

2.— Աստուածաշունչ, օրինակած է 1620-ին, որ դուռն Ս. Նիկողայոսի, զոր ծաղկած է Խաչատուր Արեգայ: Պատուիքատուն եղած է Սպահանի մէջ ապրող բարեպաշտ Հայ մը, որուն անունը անյայտ պատճառով ջնջուած է սակայն յիշատակարանին մէջ (Տիւ Ցուցակ Զեռ. Ս. Յակոբեանց, Բ. Հատոր, 1967, էջ 386):

Ջնջուածին կից յիշուած միւս անուններուն չնորհիւ կարելի եղաւ զտնել պակող անունը, «Մէլքաղա», որդի խոնայ «Սափարի» և Սուլթանփաշայի, եղրայր խոնա Ֆրւրանկուլի, խոնայ Սուլթանումի, և խոնայ ձալալի (Ձալալի): Մէլքաղայի կողակցին անունն էր Նաշխուն, իսկ զաւակները կը կոշուէին, «Մէլքայէ», Խաչիկ, Սինան, և «Մէլքիքնիադ» (Հմմտ. Ցուցակ Զեռազրաց Նոր Զուղայի, Ս. Տէր Աւետիսեան, Ա. Հատոր, 1970, էջ 208):

Բատ այսմ սոյն Աստուածաշունչի յիշատակարանին խնդրոյ առարկայ պակասաւոր պարբռութիւնը կը լրացուի Հետեւեալ կերպով: Ջնջուած և այժմ վերահաստատուող անունները կը ներկայացնենք ընդդեմայ, այսինքն տարբեր գիրով:

«Վասն որոյ ցանկացաւ մօս աստուածաւ սէր և բարեպաշտ այլն Մէլքիքայ մէծաւ փափաքմար, ուզարկեալ ոնն թասայի անուն ըՄպահանէ մինչ ի կոստանդինուա-

լիս, և ետ գրել զսա յիշատակ իւր և ծնօղաց իւրց և արեան մերժաւորաց: Ով եղրայրը և մանկունք Եկեղեցոյ, որք Հանդիպիք մօս կարդալով կամ աւրիխակելով, յիշեցէք ի մաքրամայլ աղաւիս մեր զՄելքիքաղէն և ծրնոցն զիսնայ Սափարին և Սուլթանփաշան, նաև եղրայրին խոնա Ֆրանկուլն, խոնայ Սուլթանումն, և խոնայ ձալալն: Այլ և կողակիցն նաշխունն, մանեաւանդ նապելի պարուրդիքն, Միքայէլն, Խաչիկն, Սինանն, և Մելքիքնիազն, զոր և Տէր մեր Յո. Քս. պաւաւոց զինքեանս անփոր և անսառան...» — Զեռ. Ս. Յ. Թ. 428:

3.— Քերականութիւն, օրինակած է 1620-ին: Մազմող և Կաղմող՝ Խաչատուր Արեգայ: Ստացող՝ նախ Կարասկիս Վարդապետ, ապա Խոյայ Փիրնազար — Զեռ. Երեանի, թիւ 8537:

4.— Բառզիք, օրինակած է 1621ին: Մաղեղոյ և Կաղմող, ինչպէս նաև Ստացողը, նոյն նախորդին հետո — Զեռ. Երեանի, թիւ 8563: Յիշ. ԺԷ. Դարի, Ա. Հատոր, Երեան, 1974, թիւ 995, էջ 727:

5.— Աւետարան, օրինակած է Պոյսոյ մէջ: Մազկումբ կատարած է Խաչատուր Վարդապետ, ի Սպահան: Ստացող՝ Արդյոյ Զուղայեցի, որդի Խօսավարու — Զեռ. Նոր Զուղայի, Բ. Հատոր, թիւ 58:

6.— Սաղմոս, օրինակած է 1629ին, Բաղէցիք Ամիքրապիզի պատուէրով: Կաղմը կատարած է Երևանաղէմի մէջ՝ ձեռամբ Ստեփանոս Քահանայի — Զեռ. Ս. Յ. Թ. 235:

7.— Ճաղոց, օրինակած է 1634ին: Աստուած մահատեսի Հումքի — Զեռ. Երեանի, թիւ 9807:

8.— Սաղմոս, օրինակած է 1651ին, մանրը բուրպրով: Ստացող՝ Զուղայեցի ոմի: — Զեռ. Ս. Յ. Թ. 3037:

9.— Յայսմաւուրք, օրինակած է 1657ին, Աստուածատուր Երէցի պատուէրով: — Զեռ. Ս. Յ. Թ. 8:

Ն. ԱՐԲ. ԽՈՎԱԿԱՆ

## ԱԻԵՏԱՐԱՆԱՑՈՅՑ

---

Այս անունն են կրել պատարագի և ժամերգութեան ընթացքում Աւետարանների բնթերցումն կարգը նշող ուղեցոյցները :

Հ. Վ. Հացունին բաղդից անդրազարձել է արարողութիւնների մէջ եղած աւետարանական բնթերցումների կարգի հարցին՝ Նրա հետազոտութիւններից երեսում է, որ այդ կարգն անփոփոխ չի եղել ժամանակի ընթացքում։ Այսպէս՝ «Գիշերային ժամերի մասին խօսելիս նա նշում է, որ, ըստ 1284 թ. մի այրիւրի, որը կոչում է «Հարցնացոյց բավանակ տարւոյն» (Վենետիկի Միթրարեան Մատենադարանի ձեռ. Ծի № 677, էջ 297), քարոզների կարգը պահուած էր Աւետարանների հետ, իսկ Աւետարանները՝ ութ ճայների հետ։ արդպէս է եղել դրութիւնը մինչև ժն դարի վերջերը, իսկ այսուհետեւ, հետզհետէ, քարոզների հետ եղած այդ կազմը ենթարկուել է փոփոխութիւնների, բայց անփոփոխ է մնացել Աւետարանների և ութ ճայների կազմը<sup>2</sup>։

Ի հարկէ՝ եթէ աւետարանական բնթերցումները կապուած էին ժամանացութեան բնդհանուր համակարգի հետ, ապա և պարզ է, որ աւետարանացոյցն ըստ էութեան մի ինքնուրոյն համակարգ չէր կարող կաղմել և պիտի շաղկապուած լինէր տօնացոյց կոչուած ցուցակների հետ։ Տօնացոյցները թէ՛ տօների օրացուցային կարգի և թէ՛ արարողութիւնների կատարման ուղեցոյցներն էին, որոնք նշում էին իրաքանչիւր օրուայ ներքին կարգը, թէ ո՞րն էր հերթականութիւնը կատարման համար սահմանուած նիւթերի՝ քարոզների, աղօթքների, շարականների և այլն, յատկապէս սուրբքարական բնթերցուածների և, նրանց թուում, Աւետարանների, որոնք դդալիօրէն ստուար թիւ էին կազմում քան միւսները։ Ընթերցելի հատուածները նշանակուում էին սկզբի և վերջի բառորով։ Գուցէ նրա համար, որ Աւետարանները, ութ ճայների հետ ունեցած իրենց կապակցութեամբ, կարեւոր տարր էին հանդիսանուում այդ համակարգի կառուցուածքում, տօնացոյցներին յաճախ տրւում էր նաև աւետարանացոյց անունը, և կամ՝ տօնացոյցների խորագրերում երբեմն զերիչխող դիրք էր տըրուում աւետարանացոյց բառին։ Իրեւ օրինակ՝ մենք կարող ենք նշել երեսնի ՊԼՄ. Մատենադարանից այդպիսի մի քանի մեռագրեր։

Նև 7734ը, որը 1219 թ. գրուած Աւետարան է, վերջում ունի «Ցոյց Աւետարանի և իրահանկաց» (էջ 356ա - 358թ.)։

Նև 7534ր, որը 1274-1275 թթ. գրուած Աւետարան է, վերջում ունի «Աւետարանացոյց» (էջ 278ա - 288ա)։

Նև 5453ը, որը ձառընտիր է, ժիշտարից, այլ նիւթերի շարքում ունի «Աւետարանացոյց և խրատք ժամակարգութեանց կարգեալ սրբոցն» (էջ 189ա - 195թ.)։

<sup>1</sup> Հ. Վ. Հացունի, «Պատմութիւն Հայոց աղօթամատոյցին», Վենետիկ, 1965։

<sup>2</sup> Անդ, էջ 243։ Հնում քարոզ էին կոչուած գանձերը (երգեր)։

№ 182ը, որն Աստուածաշունչ է, գրուած 1303-1304 թթ., երկու անգամ բնդօրինակուած ունի Ալեւտարանացոյց և այդ խրառիք բավական տարւոյն (էջ 743ը և 744ա - 754ը). առաջինը, որ այդ խրապիքն ունի, զրչի ձեռքով է, իսկ երկրորդը, որ խրապիք չունի, ԺԵ դարի ընդօրինակութիւն է:

№ 3722ը, որը 1304 թ. գրուած Ալեւտարան է, փերջում ունի Ալեւտարանացոյց բաւանդակական համապատակ» (էջ 358ը - 363ա):

№ 7740ը, որը 1356-1357 թթ. գրուած Ալեւտարան է, «կղրում ունի Ալեւտարանացոյց» (էջ 7ր - 9ա):

Այս ձեռագրերում աւետարանացոյց կոչուող բնադրերն ուրիշ ձեռագրերում, և ընդհանրապէս, կըում են տօնացոյց անունը:

Սակայն ենթադրելի է, որ սկզբնարար առանձին եղած լինեն աւետարանացոյցները, իսկ վերևում մեր նշած ձեռադիք օրինակները հաւատար տօնացոյցի և աւետարանացոյցի միաձուլման ժամանակաշրջանի նմուշներից են: Ինչպէս առաւել արդէն՝ այդ տօնացոյց-աւետարանացոյցներում հիմնական տեղը զբաւում են Ալեւտարանները. երբեմն նոյնիսկ, օրեր շարունակ, նշում են միմիայն աւետարանական ընթերցումները և նրանք են գերակշռում: Այս տեսակիտից հետաքրքրական է, որ 1278 թ. Սկեւայում գրուած տօնացոյցը, որը կրում է «Ճանացոյց և հայցնացոյց բովանդակ տարայ զիայ և զիսում ամոցն կարգաւորիալ բնդ իրեալս...» խորապիքը (Երեանի Գետ. Մատենագարանի ձեռ. № 759, էջ 168ը - 180ը), տօների դասաւորման հետ միասին, տալիս է միայն «Ճարց»երը, իսկ միթերցումներն առ հասարակ չի տալիս, ուստի նաև՝ Ալեւտարանները: Այսանդ մենք նկատում ենք «Ճարց»երը «Տօնացոյց»ի մէջ մուծելու ձեռնարկումը: Պէտք է այս ձեռով ծնունդ պատճ լինեն նաև մեր մատենակած տօնացոյց-աւետարանացոյցները՝ «Ալեւտարանացոյց»ի մուժմամբ «Տօնացոյց»ի մէջ: Տօնացոյց կամ աւետարանացոյց կամ տօնացոյց-աւետարանացոյց կոչուող այս բնադրերը հետզհետէ նիւթերի այլ անսակների նորանոր բնդգրկումներով աճել են և վերածուել ընդհանուր ուղղույթի՝ ամրող տարուայ համար և այժմ յայտնի են «Տօնացոյց» միակ նատնութ<sup>3</sup>:

Անկախ վերոյիշեալ հանգամանքներից՝ կարելի է, մեր օրերում, աւետարանացոյց անունը տալ նաև «Տօնացոյց»ի հիման վրայ կաղմուած այն մասնակի ուղղույցներին, որոնք աւետարանական ընթերցումների յատուկ խմբաւորումների կազմն ու օգտագործման եղանակն են ցոյց տալիս, նշանակելով հաստուածների սկիզբն ու վերջը: Այդպիսիներ նախ սկսել են հրատարակուել «Յուցակ աւետարանաց», ըստ արարագութեամբ Հայաստանեայց տառելական Ս. Նկեղեցւոյ խորապրութ՝ ասենի կոչուած Ալեւտարանների (Ալեւտարան աւելի, բայ իրաքամչիւր աւուրց յինանց, ընդ որս և ցուցակ մի յամնեայն աւուր ի ժամ սուրբ պատարագին ընթերցեալ աւետարանաց», տպ. Երուսաղէմ,

<sup>3</sup> Տօնացոյցի երատարակութիւնները բազմաթիւ են. տես, օրինակ, Ռուկան Երևանցու երատարակութիւններ. «Տօնացոյց տէրունական տօնից», Ամստերդամ, 1669: Ի դեպ նշեմի որ հետագայում Տօնացոյցի մի քանի երատարակութիւններ, եթիւ աւանդոյթի համաձայն, ամուտաբերքաւմ կրամ են «Տօնացոյց» և Ալեւտարանացոյց» խորապիքը (Կ. Պոլսի 1701, 1722, 1725, 1740, 1782 թթ. տպագրութիւնները):

1873 և 1899) գերջում<sup>4</sup>. և ապա, «Ցուցակ աւետարանաց Հանգստեան, Տաճարի, Խողաբերից, Բժշկութեան և Անդասասանի, ար պաշտին ի կարգաւորութեան հաստրակաց աղօր ից բառ ձայնին խորագրով, տպադրուել են Աւետարանի միքանի այլ հրատարակութիւնների գերջում<sup>5</sup>: Այդ ցուցահիներն ունեցել են նաև առանձին հրատարակութիւններ, որոնց մէջ կան նաև նոր յաւելումներ՝ «Խաչելու թեան», «Քառասօնօրեայ զալստեան», «Ս. Զատկի», «Խաչվերացի» և այլն<sup>6</sup>:

«Աւետարան նաշու» կոչուած հրատարակութիւններն ըստ էութեան նոյնալիս աւետարանացոյցներ են, որոնցում լրիւ բնուգրով տպագրուած են պատարադի մէջ ընթերցուող բոյոր հատուածները՝ «Տեսացոյց»ի կարդով, ամբողջ տարուայ համար: Այդպիսի հրատարակութիւններ կատարուել են Պետրովորդում՝ 1786 թ., Թիֆլիսում՝ 1867 թ. և Երևանագէմում՝ 1868 թ.<sup>7</sup>:

Այս բոյորն Աւետարանի տարեկան ընթերցումների աւգեցոյցներ են: Աւետարանացոյց է նաև ներսէս Շնորհալու յօրինած մի իրատեսակ զուցակը՝ «Նարարականի աւետարանի», ըստ խորիրդոյ արարչութեան շարականաց, զոր տէր ներսէս է շինեալ» (Երևանի Գեոր. Մատենադարանի ձեռ. № 1495, էջ 156ր - 157ա), որի Աւետարանի ընթերցումներ է հշում ըստ օրերի և ըստ տարրեր առիթների՝ «Վասն կանանց», «Վասն ննջեցելոց», «Վասն պատեհացուի», «Վասն սովորի» և այլն:

#### Յ. Շ. ԱՆԱԱՍԵԱՆ

<sup>4</sup> Հմմտ. Յ. Ս. Անասեան, «Հայկական մատենադարութիւն», հու. Բ., Երևան, 1970, էջ 490, տող 29. էջ 494, տող 10:

<sup>5</sup> Հմմտ. անդ., էջ 492, տող 25. էջ 493, տող 28:

<sup>6</sup> Հմմտ. անդ., էջ 498, տող 15, 31. էջ 499, տող 3, 9, 16, 31. էջ 500, տող 3, 10, 18:

<sup>7</sup> Հմմտ. անդ., էջ 496, տող 33. էջ 497, տող 30. էջ 498, տող 1:

## ՊԱՏՄՎԱԿԱՆ

# ՈՒՐՈՒԱԳԺԵՐ ՀԱՅՈՑ ՎԱՆՔԵՐԻՆ ԿԻՑ ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ

---

Հայոց վանքերի առաջին կազմակերպութիւնը սկսում է Ս. Գրիգոր Լուսաւորչի կողմէից, թէև աւանդութիւնը յիշում է (Ստեփանոս Օքբելեանն ասում է, որ Թանհաւատի վանքը հիմուած է Հայոց Բուականից 400) տարի առաջ, այսինքն 112 թուին, Ս. Բարթողիմէոս առաքեալի, Հոգեաց, Արտազի և մի քանի ուրբէ հին վանքերի հմարգութեան ժամանակ համարում են Առաջին դար) նաև այնպիսի վանքեր՝ որոնք գոյութիւն ունին և նրանից առաջ առաջ, Ս. Գրիգոր Լուսաւորչի սահմանելով, «Վանքը մի եղայրութիւն է, իւրաքանչիւր անդամը մի եղայր է, նրանց միացնող կապը բարոյական է, այսպիսի կապի ներկայացուցիչը եղայրների համաձայնութեամբ ընտրուած առաջնորդն է, իւրաքանչիւր եղայր պարտական է անպայման հնադանդուել առաջնորդին, նրա խրաններին ականջ զնել, նրա հրամաններին հպատակուել, ոչ մի գործ առանց առաջնորդի կամքի լինելու չէ։ Նրա կամքից զուրս եկողը պէտք է ապաշխարի, նրան արհամարհողը Աստծուն է արհամարհում, ոչ ոք չպէտք է իր կամքով գործ ինդրի առաջնորդից, այլ ինչ գործ առաջնորդը յանձնելու լինի, այն պէտք է ընդունի անտրուոն։ Առաջնորդը ինքը պէտք է անհոգ չլինի, ամէն բանի մէջ ճշմարտասէր լինի, եղբայրներին իրատի խորագիտութեամբ։ Ս. Լուսաւորչի սահմանած վանքերի մէջ առաջնորդից բացի կան և ուրիշ պաշտօնատար անձինք, նրանց մէջ առաջնորդ տնտեսն է։ Լուսաւորչի պատուիրում է տնտեսին չկորցնել, շծախել և գուրս չձգել և եկեղեցու անօթեղինը, ինչ որ եղայրութեան յարմար է, այն պարզին է Աստծոյ։ Պատուիրում է ժամանակարելու ժամանակ պահպանել հասարաւութիւնը, ծերերին, հիանդաներին, տըկարենին, ճանապարհորդներին, իւրաքանչիւրին արժանի բաժինը տալ։ Տնտեսից յետոյ զալիս են շարաթաւորները, որոնք, ինչպէս երևում է, հերթապահ եղբայրներ են, որ վերակացու են նշանակում կահկարասիքի պահպանութեանը և այլն։

Ս. Լուսաւորչի կողմից հաստատուած այսպիսի կազմակերպութեան չնորհիւ վանքերն ունեցան կրկնակի նշանակութիւն։ 1) որ նրանց մէջ կազմակերպուեց նոր հասարակութեան համար կենդանի օրինակ։ Ժողովուրդը ընդունակում էր նրանց կարգերը, սովորութիւնները և գաղափարները, որով և հստգեատէ կազդուրում էր քրիստոնէական կենքի մէջ։ 2) նրանք ծաղկեցրեցին իրենց մէջ ուսում, դպրութիւն և հասարակական կրթութիւն։

Առաջին ուժութ, որ Ս. Լուսաւորչի հիմնեց Հայաստանում, իննակնեան վանքն էր, որ յետոյ Գլակայ Ս. Կարապետ կոչուեց, Մըջապատուած խիստ և ընդարձակ անտառներով, բարձր և զերահայեաց բլուրներով, առողջարար

և բարեհամ ազգիւրներով։ այդ վանքում չուտով Հաւաքուեցին շուրջ 60 ճրդնաւորներ։ Ս. Գրիգոր այդ վանքին առաջնորդ նշանակեց մի անապատականի, որին հրաւիրել էր Կեսարիայից, գիւղեր և մարդիկ նույիրեց վանքը ապահովելու և պաշտպանելու։ Խնակնեան տեղի նախկին նույիրականութիւնը, քրիստոնեայ Ծննաւորների մարուր կենցաղը, Ս. Լուսաւորչի սահմանած նոր տօները կարծ ժամանակի մէջ կապեցին նորահաւատ ժողովրդի սիրուր այդ վանքի հետ և բարձաթիւ ուխտաւորներ համախմբում էին նրա շորջը։ Աւանդութիւնն առում է, որ մի անգամ, երբ Տրդատ Մեծը իր նախարարներով զալիս է նշանաւորներից ազօթք և օրնութիւն հայցելու, Խնակնեան վանքում Հաւաքուել էին այդ ժամանակ Հարիր Հազարից աւելի ու խտաւորներ։ Խնչակս րուրով վանքերի համար, այնպէս էլ Խնակնեան վանքի համար Ս. Լուսաւորիչ հաստատել էր վանական խստարարոյ կեանք։ Այդ վանքի միարանները յօժարութեամբ տանջում են իրենց մարմինը, Հոգեկան վսեմ բաւականութիւն ձեռք բերելու համար։ Այս երեսում է առաւելատաէն նրանց կլրակիր, զգեստին ե բնակարսնի կազմութիւնից։ Այսպէս, Առանկերդից վանքի միարանների անունը Ժիայն վայրի բանջարն էր, Մաքեննաց կրօնաւորների զգեստը ոչխարի մորթին էր, Թանահաւոր կրօնաւորները, որ կոչում էին «Ճշտապաշտօնք սահմանաւորք» բաւականանում էին շոր հացով և ջրով, այն էլ ճաշակում էին օրը մի անգամ՝ երեկոները, առանց իրար հետ խօսելու, որ ու զհէր ազօթքի էին կանդնած կամ ինչպէս Համեմատում է պատմէիչը, անչէջ կանթեղի նման կտին էին, սպասաւորներից զտա ոչ ոք իրաւունք չունէր վանքից գուրս զալու, Կիրակի օրերն անգամ բաւականանում էին միայն բանջարեղէնով և բնդեղէնով, չէին ճաշակում ո՛չ իւղ, ո՞չ պանիր և ո՞չ հասարակ թան, ուստի կոյուեցան թանահաւոր, միմիայն դիմաւոր տօներին նրանք ճաշակում էին ձէթ և փոքր ինչ զինի։ Վանական կանոնների տակ իրենց անձր ճնշող կրօնաւորներն անտարբեր չէին սակայն ուսման և կրթութեան, հասարակութեան բարոյական օգուտը պահանջում էր նրանց ներկայութիւնը և մասնակցութիւնը այդ ասպառնում։ Մէնք զիտենք, որ Ս. Սահակ Պարթիւ ունեցաւ 60 աշակերտներ, որոնք, ինչպէս պատմում է Խորենացին, մայրաքաղաքների անքոն, ժրաժան կրօնաւորների նման Փարագանազնատ, երկաթապատ և բոկաղնաց մարդիկ էին և միշտ իրենց վարդապետի հետ միասին շրջում էին։ Ս. Սահակ, ինչպէս մի անապատական նրանց հետ միասին կատարում էր մշտական ազօթքով եկեղեցու կարգը։

Ս. Գրիգոր Լուսաւորչի հաստատած վանքերը որքան և օգտակար էին, սակայն լիակատար բաւականութիւն չէին տալիս նորածին քրիստոնեայ Հայ ժուոին, որովհետև այն կարօտ էր տակաւին գործնական գպրոցների, ուր կարողանար տեսնել քրիստոնէական կեանքի շօշաբեկը պատկերը, ուսմանը նրա զործածութեան եղանակը։ Ս. Լուսաւորչի թոռակ ներսէս Մեծ Պարթիւը, եղաւ այն առաջին անձը, որ Զայ ժողովրդին գործնական վարժարաններ տուցեց։ Նա ոչ միայն, ինչպէս վկայում են պատմէինները, Հաստատեց Հայաստանի բոլոր զաւատներում յունարէն և ասորերէն գպրոցներ, այլև բարեկարգեց Հայոց երկրը, հիմնելով վանքեր և բարեսիրական հաստատութիւններ։ Ներսէս Մեծ քարոզում էր քրիստոնէական վազափարախօսութեան հետ միասին եւ ուսման, զիտութեան ու լուսաւորութեան վազափարը։ Ներսէս Մեծի հաստատած այս կարգերից յետոյ, ինչպէս վկայում է Խորենացին, Հայոց երկիրն այլև չէր որպէս բարբարոս այլանդակեալ, այլ որպէս զքաղաքացին համեստացական։

Ներսէս Մեծի սահմանած ուսումնական բարեկարգութիւնների զազափարը արժատ գգեց Հայերի մէջ. այդ երեսում է նրանց, որ հետագայ դարե-

բում ևս զոյութիւն ունէին նմանօրինակ հաստատութիւններ : Այսպէս, մենք գիտենք, որ Զ գարում Միւնեաց աշխարհի մէջ Արաքսի վրայ չինուեց Գիւտայ վանքը : Օրբելանի վկայութեամբ այստեղ էլ հաստատուեց դպրոց : Նոյն Միւնեաց աշխարհում ժ գարում կառուցուեց Նորագանքը, Օրբելանի վկայութեամբ :

Սակայն Հայոց վանքերի տյն բոլոր առաւելութիւնները, որոնց մասին խօսում են մեր բոլոր պատմինները, բոլորովին նսեմացնում են նրանց զյուաւոր կոշումը, որի է՝ ապասաւորել ժողովրդի կրթութեանը և լուսաւորութեանը : Նրանց գործունելութեանը այսպիսի մի ասպարհու և ապագայ որոշողն հանգիսաց գործնալ Ս. Գրիգոր Լուսաւորիչ : Նա հաւանեցնում էր թագաւորին, առում է Ազաթանգեղոսը, որ զանազան տեղերում մանուկներ ժողովնեն ուսում տալու համար և թագաւորին հրաման տուեց Հայոց առհմանների զանազան գաւառներից հաւաքել մանուկներին զպրութեան արուեստի համար և նրանց վրայ հաւատարիմ և սուուցիներ կարգեց, զպրոցների համար հասոյթներ ևս նշանակեց : Բացի դրանից, Ս. Լուսաւորիչ անդաղար գրում էր Կոստարիկ և ինդորում, որ զպրութեան համար հմուտ մարդիկ ուղարկեն Հայաստան : Սակայն գրիթէ հարիւր ասրի ժամանակ հարկ եղաւ, որ Լուսաւորիչ ջանքը արդիւնաւոր լինէր եկեղեցու համար և հունդքին համապատասխան մշտիկներ հասնէին : Այդ այն ժամանակ, երբ Ներսէս Մեծի բացած դպրոցներից հանդէս եկան Ս. Սահակ Պարթիկ և Ս. Մեսրոպ Մաշտոցի նման մշտիկներ մտքի և կրթութեան, որոնք Հայոց զրերի գիւտը յաջողացրին, Ս. Գիրքը Հայացուցին և պայակին դպրութեան նոր գլուխ ընծայեցին :

Իսկ երբ Պարսից հալածանքների երեսից Հայոց եկեղեցական զասը բոնութիւնների ենթարկուեց, Հոգեւորականութիւնը հարկի տակ գրուեց և արժանաւոր հովիւնները տարաշխարի աքսորուեցին, երբ Ս. Վարդանանց պատերազմից յետոյ Հայ ժողովուրդը ևս տարագիր ցրուեց յենակըն ու անապատները և մի ընդհանուր յուստիաբութիւն թագաւորեց ամէնուրեք, այդ իսկ ժամանակ պարսկական բոնութեան գործած բարոյական աւերակների տակից նորափետուր զարդարուած հանդէս եկաւ Հայոց եկեղեցական ուխտն իր վանքերով, որոնք այնուհետեւ Հայոց բարոյական պաշտպանութեան համար Եղան «սինք աշխարհի», պարիսպք Ծննդույն և աստեղը լուսատոք յերկրին, ինչպէս նմանեցնում է հերանց իր բանաստեղծական հանճարով Ներսէս Շնորհալին : Այդ նոր վանքների մէջ զեկավարութիւնն այլևս Ասորի և Յոյն կրոնաւորների ձեռքը չէր, այստեղ ժողովուել էին կեանքի և հալածանքների փորձութեան բովից ելած Հայ կրօնաւորներ, որոնց սրտի մէջ վառ և բորբոք էր ազգային եկեղեցու ինքնուրոյնութեան նախանձը : Այստեղ գործում էին այժմք Գիւտի, Յովհան Մանդակունու և Բարեկէն Ոթմուղեցու նման գիտնական և անկախ հայրապետներ, Եղիշէ Կողբացու, Մովսէս Խորենացու, Եղիշէ և Փարպեցու նման Հոգևորականներ, որոնք մի ձեռքով տարածում էին լուսաւորութիւն և ծաղկեցնում էին հայեցի դպրութիւնը, միւս ձեռքով հեռու էին մղում բարոյական թշնամու զաղագուղի յարձակումներն ու խրառումները :

### Ա.Ա.ԱՐԵԱԿԱՏԻ ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆԸ

Անդրանիկ վարժարանը և դիմաւոր տեղը այդ վանքերի մէջ, անշուշտ, Վազարչապատի կաթողիկէին է պատկանում : Ֆեռ Կորիւն Սքանչելին նրա մասին վկայում է, թէ «այնուեղ ինքնարկարար գալիս էին շատ ուսումնատենչ բաղմութիւն և թափիւր էին աստուածային զիտութեան աղրիւրի վրայ . զի

Արարատեան դաւառի մէջ թագաւորների և հայրապետների նստավայրում ըստեց Հայերի համար չնորդք»։

Վահան Մամիկոնեան ուրիշների կարում Կաթողիկէի եկեղեցին է, նորողել տուեց և այնտեղի զպրոցի վերատեսչութիւնը յանձնեց Ղազար Փարպեցու։ Վահանից բացի այդ հաստատութեանն օդնում էին և կամսարական-ները «պողովք և ամենայն պիտոյիւթք»։ Երբ Ղազար Փարպեցու թշնամիները իրեր լոյսի թշնամիներ, վանեցին նրան այս վանքից և յափշտակեցին նրա զբրձերի հետ միասին նաև նրա յունարէն զրքերը, գրքախտարար այնուհետեւ Հայոց ժայր եկեղեցին մնաց զորկ լուսաւորութիւնից և պահպանուեց այնուհետեւ իրեր մի նշանաւոր հունարէն մինչև ժիշտ ժի դարում նորոգուեց վերատին և դաւելի նախակին դիրքը և փառքը լուսակա Տաթևացի կաթողիկոսի օրօք, ինչպէս պիտի տեսնենք իր տեղում։

### ՄՇՈՑ Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ԴՊՐՈՑԸ

Կաթողիկէ Ժայր եկեղեցուց յիտոյ նշանաւոր էր իննակնեան Ս. Կարապետի վանքը, որի կրօնաւորների թիւը Զ զարում հասնում էր մինչև 400ի։ Այդ վանքը կոչւում էր քեծեահամդէս մայրաքաղաք։ այնտեղ ծաղկեց և գիտութիւնը։ Զ զարի տուածին տոմարապէտ Հայր Աթանաս, պատմիչների մկայութեամբ, տեղեակ էր բոլոր ազգերի տոմարներին, իննակնեան վանքի կրօնաւորներից էր, 551 թուականի Դուինի ժողովում կազմեց Հայոց պղպային եկեղեցական տաճարը։ Այս վանքի առաջնորդներից մէկն էր Յովհան եպիսկոպոս Մամիկոննեանը՝ Տարօնի պատմէչը։ Ս. Կարապետի անունը նուիրական էր ամէն մի Հայի համար, առաւել մեծ ողերութիւն էր առաջացնում Տարօնի ժողովդի և նրա իշխանների մէջ։ Պատերազմների, վտանգների և ամէն տեսակ դժուարին ժամանակ նրանց բացականչութիւնը Ս. Կարապետի անունն էր։ Այդ պատճառով ամէն մի դայթութեան առաջին նուէրը նրան էին ժամատցում և ամէն մի ժրէժխնդրութիւն նրա անունով էր լինում։

Սակայն ի՞նչ եղաւ Հայ ժողովրդի սիրելի և պաշտելի սրբավայրը։ Անարատա ամսադիրը Հաղորդում է, որ 1915 թուին Թուրք և Գերմանիացի բարրարուուները ուժանակներով պայթիցրել են այն և որոշ վկայութիւններ հաղորդում են, որ Թուրքերը այդ գարաւոր սրբավայրից քարերն անդամ թափել են ար ու ձոր։

### ԱՐԱԳԱՆՈՒՏՆԻ Ս. ԱՍՏՈՒԽՆԱՅՆԻ ՎԱՆՔԻՆ ԿԻՑ ԴՊՐՈՑԸ

Գլուկայ վանքի նման է դարում ծաղկեցին մի քանի այլ վանքեր ևս։ Այդ դարում պատմիչները յիշատակում են Արագանուտնի Ս. Աստուածածին վանքի անունը և Գեղարքունիքում Մաքենեաց վանքը որպէս մշակոյթի վայր։ Արագածոտնի Ս. Աստուածածին վանքի զպրոցի ղեկավարն է Հանդիսացի Թէոդորոս Քրթենաւորը, որին աշակերտել էին Սահակ Զորափորեցի, Կոմիտաս Ալսեցի և Յովհան Ոժնեցի կաթողիկոսները։ Այս վանքի տեղի ժամանի բութեան մէջ Հակասական կարծիքներ գոյութիւն ունեն։ Ոժանք համարում են նրա տեղը անյայտութեան մէջ, ոժանք նոյնացնում են Դոկերի Ս. Աստուածածին այսօրուայ վանքի տեղում։ Զորափորեցի և Կոմիտաս կաթողիկոսների գեղեցիկ շարականները, Յովհան Խմաստասէրի ողելից ճառերը մեծապէս փայլեցնում են այդ վանքի առաջնորդի համբաւը։ Ինչպէս Յովհան Խմաստասէրը վկայում է, Թէոդորոսը ոչ մեյսն իր գիտածան էր հաղորդում աշակերտներին, այլ շատ տեղերից ամենալաւ բաներ ծաղկաքաղ անելով, լրացնում էր նը-

բանց ուսման պակասը և իր գիտութիւնը շարունակ կատարելադրծում էր : Այս երեսմ է եւ Օձնեցու, և միւսների ունեցած պատրաստութիւնից : Պատմարան կաթողիկոսն ասում է . «Հմուտ և աեղեակ էր քերթողական շարագրաց և կրթական վարժից թէ ունականաց» :

### ՄԱՔԵՆԵԱԾ ՎԱԼՆԻՑԻ ԴՊՐՈՑԸ

Է զարում Գեղարքունիքում ծաղկում է նաև Մաքենեաց ժենաստանի դպրոցը : Այս նշանակալից դեր է կատարել հայ գպրութեան, մանկավարժութեան, գրութեան արտեստի, եկեղեցական—ծիսական գրականութեան զարդացման ասպարհուում : Մաքենոցաց վանքում իրենց կրթութիւնն են սուացել բազմաթիւ հոգեկորականներ, նրանցից ոմանք նոյնիսկ բարձրացել են հայրապետական զահ : Այդ գպրոցի զեկավառն է Հանդիսացել հարանց հայր Սողոմոնը : Յովհանն կաթողիկոս Դրասիանակերտցին և Մտեփաննոս արքեպիսկոպոս Օքրելեանն առանձին ջերմութեամբ և բարձր գնահատանքով են խօսում հարանց հայր Սողոմոն վարզապետի մանկավարժական գործունէութեան ժամանին : Նա իր ժամանակին հանդիսացել է նաև Հայ Եկեղեցու խոչորագոյն և հըմուտ աստուածաբառնը : Ը զարից սկսեալ ծաղկում է Մաքենոցաց վանքի դպրոցը : Այդ մասին մէնք տեղեկանում ենք Սևանի վանքի վանահայր Մաշտոց Ահեւանցու (Հետազային կաթողիկոս, 897—898) Գէորգ Գ Գառնեցի կաթողիկոսին (877—897) գրած նամակից . «Նորոդէին Հայաստան եկեղեցին ըստ բազմարդ շինութեան, և պէսպէս ուսման առատութիւնք և արուեստաւորք (քերականք, քերթողք և այլն) և գպրոցք կանգուն էին յաշխարհին և յոյն բարբառոյն տեղեկագոյնք և զուգազուրթն նոցին թարգմանք յորով կային : Այսպիսի խոհական և հոգեկան տեսիլք ունեցող ուսուցչապետ հարանց հայր Սողոմոնը Մաքենոցաց վանքի գպրոցում դաստիարակում և հասցնում է բնտիր և զարդացած աշակերտներ, որոնցից են Մտեփաննոս Սիւնեցի եպիսկոպոսը, Գրիգոր Գոյգի վարդապետը, Մաշտոց Եղիշարդեցի Հայոց կաթողիկոսը, Յովհանն կաթողիկոս Դրասիանակերտցին և այլք : Ուսումնական ծրագրի տեսակիտից սոյն վանքում մեծ կարևորութեամբ դաստիանդում էին եկեղեցու վարդապետութիւնը և Հայ Եկեղեցու դաւանարանութիւնը : Մաքենոցաց վանքի մեծագոյն ուսումնասիրութեան նիւթը Ս. Գիրքն էր :

### ՇԻՄԱԿԻ ԴՊՐԸ ՎԱԼՆԻՑԻ

Մի նշանաւոր կենտրոն էր և Շիմակայ գպրեկանքը, որի առաջնորդն էր գիտական Բարսեղ Ձնոն վարդապետը : Աս, ինչպէս յայտնի է, զրեց Ս. Մարկոսի Աւետարանի մէկնութիւնը և իր ժամանակի խմանուն մարդկանցից մէկն էր : Գանձակեցու վկայութեամբ նա բնտիր և խմբագրեց շարականների ժողովածուն, որ Հայ Եկեղեցիներում ընդունուեց և կոչուեց Ձորնատիր : Այս անուանի վարդապետը Շիմակայ գպրեկանքում դասախոսութիւններ էր կարդում իր աշակերտների համար : Այս գպրոցը անշանում է Հետազայ զարերում, բայց մինչև մի գարը ևս անրնդհատ ծաղկում է այս գպրեկանքը և Միւնեաց գպրոցների համահաւասար համբաւ է վայելում Հայութեան մէջ :

ՎԱՀԱՆ ԵՊՍ. ՏԿԹԵԱՆ

(Դար. 1)

## ՀԵՂԱԳՐԱԿԱՆ

### ՔԱՆԻ ՄԸ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

#### ԸԸՊԼԻՆԻ ՄԸՐ ԶԵՄԴՐ ՊԻԴԻԻ ՅԱԽԱՔԱԺՈՅԵՆ

«Սի՛մ»ի անցեալ քիւերուտ մէջ տուած էի յիշատակարաններ և ծանօթուրիւններ Սըր Զեսդր Պիդի ձեռագրաց հաւաքածոյին հայերէն ձեռագիրներու մասին։ Այս անգամ կը վերացնեմ ինչ որ ձեռք բերած էի իմ այցելու քիւ.Աններուտ ընթացքին։

Թիի 551

ՀԱՄԱՊՈՅ ԱՍՑՈՒԱԾԱՇՈՒՆՉ

1601

Մազադար, բարգիր, մանրանկարեալ : Թերք 37:

Գլխաւոր յիշատակարան . «Փառք... զաստուածաշունչ պատմութեանց ժողովս։ Քէպես ոչ եմք տեղեակ թէ յումմէ իմաստութիւնս, այլ տեսողքս՝ զուարձանան ի բան խմաստութեանս։ Յորոց լուսափայլ բանից և յարժատոց...։ Երանիկ և երից երանեալ բարունապետն Սրապիոն Եղեսացին։ Զոր տեսեալ զիժաստաշար...։ և ետ զրի զս՝ ոսկենկար զարդիք է վայելում անձին իւրոյ սրբասէրի...։ Հոգւոյ յիշատակ, և ծնողաց իւրոց հօրն խոճայ Դանիէլի; և նախնեացն իւր, խոճայ Ոսկեվանին, և որդւոյ նորա Վարդանին, որդւոյ նորա Փիրիճանին, որդւոյ նորա խոճայ Դանիէլին որ է հայր Սրապիոն վարդապետին, և մօր իւրոյ ժահզասիք Աթլասին, և մեծ մօրն ժահզասիք Խանդումին։ Եւ հօր եղարցն իւր Սքանզարին, մղտեսիք Ղազարին, Դաւթին, և հօր ըրեւեցն իւր Սպառային։ և մղտեսիք Սուլթանին։ Եւ գարճեալ Սրապիոն վարդապետին հօրն իւրոյ խոճայ Դանիէլին, և մօրն ժահզասիք Աթլասին։ Եւ եղարցն ի քրիստոս գնացելոցն, Խուսափերտի սարկաւաբն, Գասպար սարկաւագին, Պաղտասար սարկաւագին։ Եւ ժահզասիք խոճայ Յակոբին, որ յաւուրո յայս փոխեցաւ ի քրիստոս որ էր այր երեւել, աղքանասէք և ողորմած...։ Եւ քրեւցն իւր, մղտեսիք Սարիամին, Վարդ խաթունին, Տունեային, Մերտսին, Եղիսաբէթին։ Եւ եղար որդոցն իւր Փիրիճանին, Յուլուֆին, Դանիէլին, Գասպարին, Յովանիսին, Դաւթին, Հոփիսիմին, Խանդումին, Ալիսին...։ Արդ գրեցաւ և ծաղկեցաւ ոսկենկար մատեանս, որ կոչի համուած սասուածաշունչ ի Հայկացեան թուականիս։ ԲԾ(1601)։ ամին, ի մայրաքաղաքս Համիթ։ ի գուան սուրբ Սարգսի գօրավարին որոյ ընդհուժանեաւ պարկակիմք։ ի վերագիտողութեան մերոյն նահանգի Տիգրանակերտի, սորան ստացողի Սրապիոն վարդապետի։ Զեռամբ յոքնամեղ և զառածեալ անձին սուս և փուտ գրչի Յովանիսի, և աշխատողի ընդ իս, Ասլան՝ պատանեկի։ ի զրել՝ և ի ծաղկելն սա՝ և յայլ դրեանս։ զի էր լի շնորհու յատենայն զործս իւր։ Եւ դդրյս շատն նա գրեաց։ Ասամ կը մեամի չորս օրուամ մէջ 20 տարեկան հասակին։ Ցաւլի է որ յիշատակարանը ամբողջութեամբ չեմ արտաքրեր։

Օր. Սիրարփի Տէր Ներսէեան խօսելով այս ձեռագրին մասին իր

պատրաստած անգլերէն ցուցակին մէջ կը գրէ. (էջ 5) . «Սըրբապիան Եղեսացի, Հեղինակը այս Համառու Աստուածաշատրվածին որ նայն ժամանակ տէրս է այս ձեռագրին» . («*Serapion of Edessa, the author of this Abridged Bible who is at the same time the owner of this manuscript*») . Սակայն յիշատակարանին սկիզբ իսկ կ'ըսուիք թէ Աստուածաշատրվածին այս համառուարարէն եեղինակը ծանօթ չէ («զաստուածաշատրված պատմութեանց ժաղովս, թէպես ոչ եսք աեղեակ թէ յում մէ իմաստութիւն») :

Թիի 581

Ա Կ Ւ Ե Տ Ա Ր Ա Ն

1668

Մեծագոյն մասամբ թղթեայ, բոլորգիր, ընտիր արծարակազմ այս Աւտարանը գրուած է «ի մայրաքաղաքն Տիգրանակերտ, ի թիւականին Հայոց Ռձձէի (1668) ...ինծ յետնելոյս բանասիրաց Ընոփրիոս և այսիկոպոսի և վարդապետի առաջնորդիք Տիգրանակերտոյ...» : Հոս կը յիշեմ որովհետև էցմիածնայ Եփրեմ կարողիկոսը կը նուիրէ Սրբ Կօր Ուսրէկի՝ Անգլիոյ դեսպան առ Պարսից Ֆադայի Շահ, երբ ան իր վերադարձի նամքուն վրայ, իր ընտանիօք, կը հանդիպի էցմիածին, Յութիս 4, 1814ին:

Թիի 599

Ճ Ա Շ Ո Ց

1414

Թղթեայ, բոլորգիր: Յիշատակարանը մասամբ: «Յոզնամեղ և անարժան գրչէ Յովսէփ անուն կրաւնաւորի ի խնդրո սրբասէք և սրբահոգի կարապետի և Ստեփանոսի: ի թվին ՊԿԳ(1414), ի Հայկազն սեռիս տուժարի ի Հայրապետութեան տեսոն Յակորայ, ի թագաւորութեան Հայոց ազգին որ այլ չերեին ի զառն և ի նեղ ժամանակին որ Հարկապահանչութիւն զշայք ասպարցին. և մեք կանք հալածական» : Ումի շահեկան լուսանցագարդիք Հայ մամրանկարչութեան համար:

Յիշատակարանը անգամ մը ևս կը հաստատէ որ Յակոր կարողիկոս, որ Սսեցի կոչուածն է, ապրած է Մինչև 1414: Պէտք է մերծել ցարդ ընդունած և Օրմաննամէ ալ նուիրագործուած 1411 բուականը Յակոր Սսեցիի բունաւորմամբ ոպաննուելուն: Երկանի թիւ 3876ի յիշատակարանն ալ գրուած «Թուականութեան Հայոց ՊԿԳ(1414)...ի հայրապետութեան տեսոն Յակորայ», կը յիշէ: Այսպէսով կարելի կ'ըլլայ պարզել ամրոշութիւնը Յակոր Սսեցիի կարողիկոսական ժամանակաշրջանին և հշանակել 1404էն 1414. իրմէ վերջ Գրիգոր Խանճողատ կարողիկոս եղաւ սակայն դժբախտարար որոշ չէ թէ երբ: Մամօր յիշատակարաններ 1414էն վերջ մինչև 1417 չեմ յիշեր: 1417ին կը յիշուի «ի կարուղիկոսութիւն Սրսայ Գրիգորի» որ Խանճողատ կոչուածն է:

Թիի 600

Ճ Ա Շ Ո Ց

1446

Թուպք, բոլորգիր: Գլխաւոր յիշատակարան: «Փառք...Տէր կարապետ կաթողիկոս ամենայն Հայոց, որ և փառաց արժանաւոր գրտեալ և անուարի սուացեալ և գործու հրաշան կատարեալ: Որով աստուածահայր փառա-

ւորեալ, և ըգթագ արքայական սուրբ արքիաւորչին մերոյ ի զլուխ եղեալ և հրաշալի պատուով պրակեալ և յաջորդ սուրբ Լուսաւորչին յաթոռ հաստատեալ, և մերբատին կրկին նորոգեալ զաթոռ մայքազազաքիս Կիլիկիոյ, և գհետ հետոց նախնեաց ընթացեալ, մաքազարդ այցելու և պատրիարք առաքելաշը-նորէ սուրբ աթոռոյ հաստատեալ ի յաստուածաբնակ ուխտու Տէր Պաւոսի որ կացի հարաւակողմն քաղաքին Սըսոյ՝ ընդ հովանեաւ Վանկոյ սուրբ Նշանին և սուրբ Աջոյն Գրիգորի մեր Լուսաւորչին և մաւրին տիրամաւր Աստուածածրնին Աննայի, յորոց անուն կասուցեալ կայ սուրբ եկեղեցի: Զոր նախնեացն հետեղ գտեալ մեծ պա(տ)րիարքն Տէր Կարապետ, հանճարեղ և կորովամիտ, քաջ հուեաոր և վարգապետ աստուածաբնական անստաբակրյ գիտող և խնդրող մեկնաւուղ հին և նոր աստուածաշունչ կատարանաց, մանաւանդ առնող ուսուցող, տեառն իւրում նրմանելով և քարծաթ ի հօգիոր սեղանս արկանելով: Սա աստուածաբնակ այրս Տէր Կարապետ կաթողիկոս ի վերայ իւր անրա բարեացն և անմոռանիր յիշատակացն, մանաւանդ տանն աստոծոյ, և նորին սպասուցն զարգարմանց ստացան զուրբ մատենաս աստուածային որ տարեկիրք կոչի յիշատակ իւր և ծնաւզաց իւրոց (տող մը պարապ) և եղբաւըն պարոն Առաքելին, և եղբաւը որդոցն Տէր Գրիգորին, և ամենայն արեան մերձաւրաց իւրոց: Արդ այս երջանիկ հայրապետ Տէր Կարապետ կաթողիկոս եկեալ ի Թոփաթոյ և գերբասին հաստատեաց զուրբ աթոռ Լուսաւորչիս ի ժայրաքայք Կիլիկիոյ գոր Ե(Ե) ամ խորանեալ մնաց՝ վասն անյայա լինելոյ սուրբ Աջին մերոյ Լուսաւորչին: Եւ յիտոյ գտեալ նորոգեաց զուրբ աթոռու Եւ եկեալ զնաց յերւասոյէց և երկրպագեաց սուրբ տեղեաց անաւրինսկանաց քրիստոսի, և տեսեալ զամենայն պակասութիւն Հայոց վանացն սրբոյն Յակովբայ՝ զի յայն ժամանակի եկեղեցին Հայոց սուրբ Յակոր ի ներքե պարտուց անկեալ Կայր՝ և խաչ աւետարան, և շուրջառ ի ձեռո այլազգեաց յաւանդ կային: Եւ անտի Եկեալ Տէր Կարապետ կաթողիկոսն զնացեալ էջ յեղիպսոս առ սուլթան Դահիրն. և մեծարեալ պատուեցաւ ի նմանէ՝ և առեալ խիյայս մեծազին, և պարզես մեծամեծա՝ որպէս աւրեն է թագաւորաց՝ տալ պարզես մեծամեծաց՝ ըստ արժանեաց: Եւ եկեալ կրրին յերուսայէմ և ազատեաց գեկեղեցին ի պարտոց՝ և զրորութիւնն ի յանաւրինաց: Եւ անտի եկեալ սեպահականեաց զուրբ աթոռու Կիլիկիեցոց, և սուրբ ուխտու Տէր Պօղոսի գոր տէր աստուած վայելի տացէ նրմա զաթոռ և զաստուածաշունչ զիրքս, և անմնելի յիշատակ պահեսցէ նմա և ծնօղաց իւրոց (պարապ տող մը) և եղբաւըն սուաքելի և եղբաւը որդուցն Տէր Գրիգորի ամէն:

Արդ՝ զրեցաւ սուրբ մատենան աստուածային ձեռամբ գրի Մինաս սարկաւադի ի յերկիրն Արտապիկեռոյ ի մեծ հոչակաւոր ուխտու Փրկչին... ի թրւականութեանն Հայկազն սումարի. ՊՂԵ (1446). ամի. ի Հայրապետութեան Կիլիկիեցոց Տէր Կարապետի, և ի թագաւորութեան Եղիպտոսի սոյթան Դահիրի՝ ազգին մասմետականի...:

...զՄինաս սարկաւագ գծող զրոցս և զծնաւազն իւր զՍուլդան և զՄէր խաթուն, և զեղբարսն զնուրատին, և զթովանէս՝ զՅոհաննես. և զՅահըրիան, և զքոյրին զթանզազիզն, և զամենայն արեան մերձաւորսն ամէն:

Արդ՝ ևս Գրիգոր եպիսկոպոս Հարսընքֆոյ՝ ետու գրել զզիրքս քրւեռորդոյն իւոյ՝ Մինաս սարկաւադին և ծաղկեցի և կապեցի ձեռամբ իմով ի Եւու Տէր Կարապետ կաթողիկոսին:

Ճաշցու նախապէտ մաս կը կազմէր Անտոնեան միաբանութեան հաւաքածոյին: Անս խաչիկեան իր Յիշատակարաններուն շարին (1446) պակասաւոր և ետ ու առաջ երատարակած է յիշատակարանն մասք:

Յ. ՔԻՒՐՑԵԱՆ

## ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

**Ի ՅԱՑՏՆՈՒԹԻՒՆ ՏԵԱԱԽՆ ԵՒ Ի Ս. ԵՒ  
Ի ԼՈՒՍԱԽՈՐ ՄԿՐՏՈՒԹԻՒՆՆ(\*)**

Իսկ այն որ ասէ, եթէ ապա քաղցեաւ, զայս ցուցանէ՝ և յորժամ կամեցաւ, Զի թէ որպէս զամենայն մարմին համարիս զնա, յառաջնում աւուրն, կամ յերկրորդում քաղցնոյր, որպէս Մովսէս, և Եղիա, բայց թէ կամ լիեալ էր նմա, և ոչ յայնը էր քաղցեաւ:

Եւ զիա՞րդ իմացաւ ստանայ զի քաղցեաւ։ Ամենայն մարմին յորժամ քաղցնու, կերպարան մարդոյն ոգեղ ցուցանի յաշա մարդկան, այնպէս և նա տրաբեալ կամաւ, որով եցոյց ստանայի եթէ քաղցեալ է, այնու իմացաւ ըգ-քաղցն, որոց ճահաշելով ի կերպարանն, յառաջ մատուցեալ, ասէ. Եթէ որդի ես Աստուծոյ, ասա՞ զի քարինքու այսոքիկ Հաց լինիցին, Ոչ առաց՝ եթէ որդի ես մարդոյ, վասնիքի այն խորհնէր իմանալ որ ի(ո)ռովկեցուցանէր զնա, եթէ որդի դի ես Աստուծոյ՝ ասա ևեթ, Հրամայեա միայն, և զիւտ զայցէ դործն Հրամանաց քոց, Եթէ որդի ես Աստուծոյ, ասա, Հրամայեա ևեթ, Տէր ես, Հրաշ դործող ես բնութեանց, իշխանութիւն ունիս, ասա՝ և հնապանդեսցին քեզ տարերքոդ. ոչ զոյր էութիւն, և տարերե, ո՞րչափ ես առաւել զիդեալք փոփոխիւն կարասցեաւ:

Եթէ որդի ես Աստուծոյ ասա քարանցդ, և Հաց լիցին։ Խնդրէ իմանալ և սեսանել թէ որդի է Աստուծոյ, և այնու ջանայր ստուղել եթէ կարող է ըդ-քարիննս Հաց առնել, զի հնար զնելով խափան լիցի մահուն և արդել, որով բնդ հօր և ընդ մարդկան զհաշտութիւնն էր Հանդերձեալ առնել։ Զի՞նչ ապա Քը-րիստոս, վասն զի վԱստուծութիւնն նորա կամեցաւ իմանալ ստանայ, խոնարհութեամբ ի մարդկարարն զիջանէ բան։ Եւ քանդի նա զառաջին մարդն Աստուծած լինելովն խարեաց, մարդ եմ ասէ, և ոչ փափաքիմ մարտանալ ի վեր քան ըստահման մարդոյ և Աստուծած լինել, քաղցեայ ստոյգ, այլ ոչ այնպէս զի քարինս Հաց առնելով յագեցայց։

Ո՞վ խորհրդոց խորին տնօրեննութեան նորա, նա խորհրդացաւ իմանալ թէ Աստուծած իցէ, իսկ ինքն հաւան առնել բանիւ, թէ [ոչ Հացիւ միայն ապրի] մարդ, այլ ամենայն բանիւ որ ելանէ ի բերանոյ Աստուծոյ։ Եթէ որդի ես Աստուծոյ, ասա քարանցդ զի Հաց լինիցին։ Այժմ զայց ոչ գործեցից, այլ յորժամ կատարեալ ի զլուխ հանից զսնօրէնութիւնն, և խաչես զիս, յայնժամ ի խորս անդնդոց առ քեզ զամ, ի տանն քամ, զոր կամեցար շնել մահուամբ իմով, և անդ ցուցից քեզ զարդարութիւնն իմ. ոչ ցուցանեմ այժմ, այլ ի խաչն և ի բեկուըն, զի յորժամ կարծես թէ յաղթեցի՝ յաղթիս. այժմ իբր զամենայն մարդ խօսիմ ընդ քեզ, զի կարծեցես եթէ պէտ ունիմ լսել բանիցն Աստուծոյ։

Եւ ընդէ՞ր աս[ա]ց ցնա՞ եթէ ոչ Հացիւ միայն ապրի մարդ, վասն զի Աղամ ի դրախտի անդ՝ ի ձեռն կնոշն եկեր ի պտղոյն և անկաւ ի փառացն, և նա յանապատի անդ զառաջին զենն ոչ գտանէր, և ոչ պտուլ ինչ, որպէս ի գը-

(\*) Սկիզբի մասը տեսմել Սիռն, 1975, էջ 245-250։

բախտին, որով պատրէր, նո՞ւ և ոչ ծառինչ, բայց միայն ի քարտնց : Ասացից արդ եթէ զայսոսիկ դործեցնէ, Աստուած է Հաւասատի :

Իսկ Յիսուս իրեն լուաւ զառացեալոն ասէ . Որ վասն որովայնամուռ թեան մարդոյն առաջին արարիչօ նորա մարդ եղէ, ախտիւ նորա զիա՞րդ պատրեցաց ի Քէն : Իսկ սատանայ իրեն խացեալ զի չկարաց այսու պատրել, քանզի մարդկարար խօսէր, խորամանդեալ ասէ . Արդ եթէ մարդ է, և Աստուած ոչ իցէ, այսու փորձեցից զնա : Ամենայն բնութիւն մարդոյ աշխարհասէր է, և ցանկացօշ փառաց, և թէ մարդ է՝ զայս ստոյդ պարացէ :

Հանէ ապա զնա ի լեան մի բարձր, ցուցանելով կամենայն թագաւորութիւնս աշխարհէ և զփառ նոցա, ասէ . Այս ամենայն ինձ տուեալ է, և եթէ անկեալ երկիր պազանիցն ինձ, քեզ տաց զսոսա : Որով իմացեալ Քրիստոսի, զի անդիտութեամբ ո՞րպէս առ մարդ փարի առ նա, մարդկարանը արարեալ բոլովասիսին, ամենայն մարդոյ՝ Աստուծոյ ասէ պարա է երկիր պազանել, զի գրեալ է, Տեառն Աստուծոյ բոլով երկիր պազանիցն, և թաղաւորութեան մարդկան Աստուած միայն ունի իշխանութիւն, և ոչ գու:

Այս ամենայնիւ իրեն ստուգեաց սատանայ եթէ մարդ է Հաւասատի, և ու կարացէ յաղթել ինձ, երթեալ գրգռեցից գժողովուրդն հրէից, և զիշխանս և զգաւանայն նոցա, որք հանապօր չարութեամբ մարելով առ նա, ծարուիք իինին անպարտ արեան նորա : Եւ այնպէս զինի ամաց երից պատրատեայ կամարար կամաց իւրոց զՊուդա, և եմուտ ի նա, զի բարեգործն ինքեան մատնեցէ նոցա, և զինեաց զնա Հակոսուակ նմա, որոյ կատարելով դդրեալոն ամենայն, ել ի իաչ : Եորում ուրախանարդ սատանայ կործեաց թէ յաղթեցի, ասէ . զօրացաւ սա նշանօք և արուեստիք, յինքն ձեի գժողովուրդն դայս, և արդ յաղթելով մմա կապեցի, քենուցի, չարչարեցի, խաչեցի, սպանի : Իրեն զայս ամենայն ի գլուխ հանեալ, կարծեաց եթէ յաղթեցի :

Մահուամբ նորա ինքն յաղթեցաւ զայ ի Յորդանան, և անդ իորտակեալ չախիչախիցաւ զյուի նորա, ակարացաւ, և որք որդիք էաք մեղաց, որդիք Աստուծոյ եղաք ի ձեռն աւազանին լուսոյ :

### Յ Ո Ր Դ Ո Ր Ա Կ

Եւ արդ յորժամ որդիք եղաք մկրտութեամբն Քրիստոսի, և ծնունդք լուսոյ, պարա է որդւոց Աստուծոյ, եղարցս Քրիստոսի, բզկին կամաց նորին հետեւի, և գործն լուսոյ գործել, վասն զի նոյն հոգի և ինամք հայրականն ձայնին՝ և ի մերն խոնարհի մկրտութիւն, զի ոչ եթէ ըստ ընտրութեան տուեալ լինի չնորհս այս, կամ ըստ իմաստութեան և ազդի պատրականութեան, կամ ծերոց միայն, և մանկանց ոչ, կամ տղայց և եթ՝ և հասարակաց ոչ, կամ արանց միայն, և կամ չիշխանաց առանձինն, և ռամկաց ոչ, կամ ապատաց յատուկ՝ և ծառայից ոչ, կամ գիտնականաց և եթ՝ և տշշիտաց ոչ : Այլ առ հասարակ ամենեցուն է պարզնս : Սոյնպէս և պատուիրան գործելոյն զգործս արդարութեան . զի որպէս աւազանն առւրբ՝ հասարակաց պարզնեցաւ որդիութեան չնորհացն բաշխարան, սոյնպէս և գործք արդարութեան լուսոյ ըստ շրնորհն պահանջի յամենայն մարդկան :

Աւազան հասարակաց՝ և գործք լուսոյն նոյնպէս հասարակաց : Եւ ամենայն այս յառաջինն յայսնեալ կիրացաց, և ո՞ւր արդեօք, ի ծովն կարմիք, զիա՞րդ, որպէս ասեմ, և Պօդոս ուսուցանելով զրէ . Ոչ կամիմ, եղարք, եթէ ագէտք իցէք փորհրդոյս, զի հարքն մեր ամենեքին ընդ ամպովն էին, և ամենեքեան ընդ ծովն անցին, և ամենեքեան ի Մովսէս մկրտեցան յաման և ի

ծովն, և ամենեքին գնոյն հողերը կերակուրն կերար, և ամենեքին գնոյն հողեր ուրպելին արրին:

Զայս ամենայն ոչ վայրապար տառցեալ Պօղոս, այլ կարի յոյժ պիտանագոյն, որով կամեցաւ զեկուցանել մեզ խորհրդիւ՝ և թէ բազում ազգակցութիւն զոյ հնոյն ընդ նորոյս, և զի այն օրինակ էր շնորհացաւ և ճշմարտութեանրա, այսու կամեցաւ ցուցանել, զի զոր օրինակ քեկեղեցի, ի ծնունդ աւազանին, ոչ ինզրեսցին ի միմեանց ազատ և ծառայ, ոչ ստար և քաղաքացի, ոչ արգար և մեղաւոր, ոչ իմաստուն և անիմաստ, ոչ ծեր և երիտասարդ, ոչ իշխան և ուժիկ, ոչ այր և կին, այլ ամ. հասարակ, և ամ. անձն և ըրութիւն, միասիս վայելիսցին եւ այսուիկ առաւել մեզ քաջատոհմութեան նշան. զի որպէս թագաւորն, որ ծիրանեօն զարդարեալ է, և թագիւն պայծառացեալ, վայելէ ի չնորհս աւազանին, սոյնպէս և անարդն և աղքատ(տ)ն, և ամենայն ոք ի փոքունց և ի մերժացելոց, դոյն օրինակաւ ցուցաւ և ի հնում. վասն զի ոչ կարէ ոք ասել՝ եթէ Մովսէս այլ ճանապարհաւ անց ընդ ծովն, և Հրէայք՝ այլ, և ոչ մեծատունն այլ իմն ճանապարհաւ և աղքատն այլ, և ոչ եթէ կանայք ի ծովն մկրտէին, և արքն յամպն: Այլ ամենեքին Մովսէսիւ առաջնորդելով, յամպն մկրտէին և ի ծովն, որոց անցանելն ընդ ծովն՝ օրինակ էր մկրտութեանը: Եւ պարս էր զի նախ օրինակն անդ դըրոշմիւր, և ապա զինի ճշմարտութեանս երթիւր, զի զամենայն չնորհք նորոյս և ճշմարտութեան՝ հին օրինակեաց:

Զիա՞րդ, որպէս ասեմ, զոր օրինակ տեսանես ի պատկերագիրսն, զի նշանագրեն նախ ի սիւն և յորմոնս եկեղեցեաց զառաքեալսն, զմարդարէսն, զնահապետսն, և գու նկատելով ճանաչես զառաքեալն, կամ զմարդարէն. զի ընդ աղօտ կերպարանս իմն տեսանես, մինչ զայցէ ի վերայ երանդ դունցն, և պայծառացուցանէ զտուերագիրն, և ապա ձկելով ի վերայ սպիտակ իմն զեղով, ճանաչին անուանքն: Դոյն օրինակ և զմիութեամբ զուգութիւն հընոյն ընդ նորոյս. ի Պօղոս իմացաց ստուգիւ. զի անցանել որդւոցն Խորայէլի ընդ ծովն օրինակ էր անցանելոյս մեր մկրտութեամբ աւազանին ընդ մեղացս ծով: Վասն զի ծովն, յոր նորա, զաւազանիս բերէր զսիպ, և ամպն որ ի վերայ՝ ըդշուղոյն Սրբոյ:

Մովսէս զՔի. ազատութիւնն՝ որ ի փարաւոնէ, զաղատութիւնս մեր ի ստանայէ, նոքա անդ ամենեքեան, և մեք ստա ամենեքեան, նոքա յեզիպտացուց փրկեալ, և մեք ի զիւաց, նոքա ի բարբարոսացն, և մեք ի մեղացն: Անդ փարաւոն և կատքն իւր ի ջուրսն ընկոմեալ, և ստա ստանայ և հին մոր. դըն յանցանաց, ի Յորդանան [սուլքեալ: Տեսի՞ք ազգակցութիւն հընոյն ընդ նորոյս, այլ նորա քան զհինն կարի վերագոյն, քանդի հին օրինակ էր ճշմարտութեանս, և ոչ ճշմարտութիւն: Չոր օրինակ, զի ոչ առանց ստուերագիրն դեղագործ լինի, և զարձեալ նորոգելով պատկերին, ստուերագիրն ոչ երեսի, նաև և ոչ ստար ամենենին օրինակն ի ճշմարտութեանէն. զի թէ օտարանայ՝ ապա օրինակ ոչ է: Եւ զարձեալ ոչ հաւասարի ճշմարտութեանն, զի օրինակ է, և թէ հաւասարի, ապա ճշմարտութիւն է՝ և ոչ օրինակ:

Ամենքեան ասէ՝ ի Մովսէս մկրտեցան յամպն և ի ծովն, և ամենեքեան զնոյն հոգեոր կերակուրն կերան: Ի ժամուն յայն՝ յորում բացաւ ճանապարհ ծովուն առաջի նոցա, հրամայէր Մովսէս անցանել ամենեցուն ընդ նոր և ընդ սրանչելի ճանապարհն, զոր ոչ երբեք տեսեալ էր ուրուց, և ոչ ակրնջօք լուեալ, և ոչ ստիւք կոխեալ, և նոքա վեհերէին, գժուարէին, դողային, սարսափէին, զոր տեսեալ սրբոյն՝ նախ ինքն մտեալ տառջի, և ապա տեսեալ նոցա համարձակութիւն, մտին զինի:

Եւ աստ Քրիստոս նախ ինքն ընկալեալ զմկրտութիւնն, երաց սովու մեղ ճանապարհ յարքայութիւն. նոքա Մովսիսիւ յանապատն առաջնորդեալք, և մեղ Քրիստոսիւ յարքայութիւն. անդ նոքա Մովսիսիւ համարձակեալք ճանապարհ արարին ընդ ծովով, և աստ մեղ Քրիստոսիւ համարձակեալ ճանապարհ տանեմք ընդ երկինս : Անդ գինի թնդ ծովով անցանելոյ, նախ Մովսէս ել յանապատն, և նոցա զմանանայն իջուցեալ գոզենոր կերակուրն : Եւ աստ զինի մկրտութեանն, Քրիստոս ել յերկինս, և կերակուր մկրտելոց յինքն՝ զմարմին իւր պարզեալ, որպէս զրաւակն իմն առ ինքն ելից մերոց, և առհաւատչեայ նոցա՝ ելանելոյի ի ջրոյն հոգենոր կերակորյն պատրիաստ սեղան, ուր ամենեքեան բնթանան, և մեղ ելանելով յաւաղանէն, ի որրութեանն յայն բնթանամք սեղան, ուր անսպառ և անծահակն կերակուր մարմինն է աստուածակն : Նոքա բժագին ի բղյամանէ խոցուածոյ վիմին ապաստ, և մեղ ընպեմք ի մէմ սեղանոյն՝ զինանայտակ արիւնն կողին անարատ :

Արդ որպէս նոքա ամենեքեան ընդ ծովով անցին, զմի հոգենոր կերակուր կերան, և զմի հոգենոր ըմպելի արրին, նոյնպէս և այժմ ամենեքեան մեղ մրկրտեալք յեկեղեցի աւաղանաւն, ի սուրբ և յանարատ մարմնոյ նորա վայելելոց հմք, ոչ մեծատուն առաւել և ոչ ազքատ նուազ : Նա և սուրբ և պատուակն արիւնն նորա, միապէս եմք ճաշակելոց, որպէս անդ զմանանայն, և զիմուրուի ջուրն առ հասարակ ամենեքեան վայելէին : Քանզի յարեան ոմանք ի ժողովրդինէ անտի, և ազահել խորհեցան յաստուածապարգե մանանայն, և նոյն ժամայն ազահեան յորդուան գարձաւ : Վասն զի հասարակաց է պարզեւն, և ոչ առանձինն, և թուզի մարդկան : Եւ զի մի կարծեցնն՝ թէ ընական սովորութեամբ բղյամին ըզմանանայն օգէ անսպատին, ի շարաթուն աւուր խափանիւր յիջանելոյ. զի սկամայ խափանելով պատիւ տացեն աւուրն : Դարձեալ և զամենայն տարերս ի սպասուորութիւն ածէր նոցա, որպէս յետոյ առաքեցն ցուցանելով նոքօք զամ . սքանչելիսս զօրութեան իւրոյ :

Զի ծովով, որ նոցա ճանապարհ արարեալ անմիաս անցուցանէր, զիշիպատացին ընկդմւալ սատակէր : Աւզն, որ ներճակ բարբարոսացն կտրկուս արկանէր, նոցա յանապատին, զմանանայն ցոյչէր : Երկիրն եգեպտացւոց նոցա ժուն հոացուցանէր, և հոգմ հարաւոյ սոցա յորամարդ ընծայէր : Հակառակորդացն ազգի, տիւն ի զիշեր փոխարկիւր, և նոցա զամ . զիշերս սիւն լուսոյ ջահաւուէր : Որք ունէին յարբումն չառարտուզին նիդոս, ծարաւով պապակէին, և նոքա յանապատն անջրդի, միմարտուզի ջուրքը վայելէին : Զարպարարուչն զորուքն վանէին, և նոցա սկայիցն ազգը զիմահար լինել ոչ կարէին : Զայսմ ամենայնէ յուշ առնէր նոցա Պօղոս զի յամենայն վայելեցն, և չեղն ընդունելիք :

#### Յ Ո Ր Դ Ո Ւ Ա Կ

Արդ և մեղ, որ քան զնոսս ի պարզե չնորհացս և ճշմարտութեանս առաւել վայելեցաք, զնոյն իրաւունս և զդատաստան և առ մեղ տեսցուք արկեալ է կիր, զի ոչ մկրտութիւնն, և ոչ հազորդութիւնն տէրունոյն մարմնոյն, և ոչ ճաշակումն պատուակն արեանն, և ոչ սեղանն սուրբ, և ոչ հաւատ Երրորդութեանն, և ոչ այլ ինչ յայսպիսեացս, չկարեն փրկել զմեղ յաւուրն ընտարութեան, եթէ ոչ կենցազ մաքուրս և առաքինի վարս ձեղեցուք ի մեղ : Քանզի Քրիստոս վասն մեզաւոր մարմնացաւ, և մկրտեցաւ, և ոչ վասն արդարոց, և հաստատելով ինքաւմբ զնոր հաւատո, եղ ի վերայ օրինացն հընոյ, նոր օրէնս, և ի վերայ պատուիրանացն առաջին, նոր պատուիրանս :

Եւ առեն, օրէնքն առէր. մի չնար, և Թէ՝ մի՛ շանկար ամենելին .

անդ ասէ, մի սպահնաներ, և ասսա եղբօրն մի առանցեամօրոն, անդ ասէ, ուռւռ մի նրգնուցուս, և ասսա ամենին ոչ հրամայէ երդնուը, 'այլ ասէ զայն, այս, և զուն' ոչ։ Անդ ակն բնդրական, և առամի բնդրաման առաջեայ, և ասսա որ ածէ ապատկ աշորյ, ժաման նման և դժիւնն Անդ՝ սիրել ասէ զրնկերն, և դոթչնամիւն՝ ատել, և ասա՝ եթէ սիրեցէք զթշնամիւն ձեր, բարի արարել, ատել-եաց ձերոց, և թէ օրհնեցէք գանիծիւն ձեր։ Զայս ամենայն ի քրիստոնէից կարդրս պահանինիւայրա, և ապա զաւարոն ամենայնի, իրը պսակ իմն ի վերայ եղեալ, եթէ որդեկող զայս՝ որդիք եղիլիք օրն ձերոյ, որ յերկինս է Ընկայար գմիրտութիւնն՝ լուսաւրեցար հաւատով, ի Քրիստոն միրտեցար, զՔրիստոս զգեցար։

Արդ ահա՝ զպատուիրանս նորա, նա մարդասիրելով առ քեդ, վասն ապրեցուանելոյ զքեզ, զամենայն կիրս մարմնոյն կրեաց կամաւ, քաղցեաւ, ծաւրաւցաւ, արտասուեաց, աղօթեաց, անպատկեցաւ, իրը զմի ի մէնջ՝ որպէս մեղանչական։ Թուք յերեսն ընկալաւ, խաչեցաւ, որպէս չարագործ, մեռաւ իրեւ ժահապարու։ Եւ թէ հարցանես եթէ վասն ո՞յր, ևս անսացից վասն քո, զի սիրեաց զիւկ։ Արդ եթէ նա՛յազազ քո զքեզ զգեցաւ, սակն սիրոյն որ առ քեդ զայր ամենայն կատարեաց, գու ոյ այսածր զնան ունիս զգեցեալ, վասն սիրոյնո րա արս զպատուիրանս նորա, և զայր՝ ոչ վասն օդտի նորա, առևմ, այլ վասն քո։ Զի թէ նոտ որ անմարմին էր, վասն քո մարմնացաւ, անքաղցնային քաղցեաւ, անձարուելին ծարաւեցաւ, անքունն ննջեաց, անկարուն ընթացից, յուղեղնացոյթեան վաստակեաց, անքրոննին, կտակեցաւ, անտեսանելին խաչեսու, անմահն մեռաւ մարմնով։

Դու վասն քո զհրամանս նորա բնդէ՞ր ոչ առնես, նա զոնէծն վասն քո երարժ, զկապանս օրինաց(ս)ն ելոյն, զմիշնորմն քակեաց, զրոցելին սուրն երարժ, զգրունս արքայութեանն երաց, զհարսանիսն պատրաստեաց, զառացասն զարդարեաց, զպարարակն զինեաց, և հրաւիրելով զքեզ՝ զամենայն քի պարզեց եաց։ Դու ընդ այս ամենայնի զպատուիրանս նորա բնդէ՞ր ոչ առնես, զի զպատրաստեալսն քեզ վայելելսցես։ Նա որ Աստուած էր քո, զայր ամենայն՝ վասն քո արար։ Դու իրրն զնան բնդէ՞ր ոչ առնես, որ արարած ևս ձեռաց նորա։ Նա ստիգմոզ և զու ստիգմուած, նա երկնաւոր, և զու երկրաւոր, նա տէք և դու ծառայ։ Երիա՞րդ ոչ առնես զայն վասն քո, զոր նա յանձն առ վասն քո։ Զկարեմք ասէ քաղցնուուր, և ոչ ծարաւիր, վաստակիլ, կապիլ, չարչարի, և մեռանիլ, և ոչ հա պահանջնցից զայր ի քին, ապա զե՞ն արարեց։ Լուր եթէ նա քաղցեաւ վասն քո, դու զքաղցեանս կերակրեա, եթէ նա ծարակեաց, զու ոժարաւեալսն արրոյ, եթէ նա վաստակեաց, դու զաշխատեալսն հանդու, եթէ նա կտակեցաւ, զու որքան կարօզ իցես, կապելոց օգնական լեր յարձակին, եթէ նա չարչարեցաւ, զու ի չարչարեալսն զթա, եթէ նա՝ մեռաւ կտամաւ, զու մեղացն զործոց մեռու զմարմինդ։

Զայր ամենայն զոր ասացեր Հրնար է առնել, իսկ կենդանի միայ, և զմարմին մեռուցանել, զիա՞րդ լինիցի։ Լուր արդ, ամենայն մարմին, որ մեռնե, եթէ զունեն զնան՝ ոչ հայրաւանայ։ և եթէ պատուեն՝ ոչ ուրախանայ։ և եթէ անարդեն և ապտակեն, ոչ բարկանայ, և եթէ Մերկացուցանեն՝ ոչ հակառակի, և եթէ համբուրեն՝ ոչ բերկրի, եթէ Հարկանեն զծնօտն, ոչ տարեսցի, և եթէ ծածկեն ոսկւուրի յերախտիս ոչ համարեսցի, եթէ մերկացուցեալ ի վերայ աղբից ընդենուցուն՝ ոչ խոռվեցի։

Արդ ի կեսան քո, և ի բարիօրութեանն իրը կենդանի, կեր և ըմպեա, զդեցիր, ամուսնացիր, վայելեա յաստեաց վայելչութիւն, և կենդանութիւն ամենայն մէղաց, զմարմինդ մեռեալ պատրաստեսջիր։ Ախտ են ասեն բանքդ,

Հ կարէ գործել : Բարւոք ասացեր , այլ վերապոյն է պսակն քան զամենայն առաքինութեանց : Արդ եթէ ոք յափշտակեալ հանցէ զինչս քո , և չկարես զարձուցանել , եթէ վշտանարով տրտմիս դու և անիծանես , զյափշտակեալն ոչ զարձուցիր , և ի վերայ կորսունան ընչիցն , յանցաւոր և պատուիրանազանց եղիր : Իսկ եթէ զոհանալով զկատունայ , օրհնես զնա՝ և ոչ անիծանես , զյափշտակեալն նորա ի ձեռանէն Քրիստոսի հապարապատիկ դատանիցեա , ընչ որում ի զարքայութիւնն . և որ յափշտակեաց դըոյն՝ առցէ ընդ այնմ բիւրապատիկ տանջան ժառանգելով և զնուրն անշիշանելի :

Եթէ անարդէ զեզ և թշնամանէն , և դու զնա թշնամանելով նրմին նը . յան երեւնցիս , երկորեանդ առհատարակ զմի կրեսիք պատիժ : Իսկ եթէ դու դուռութեամբ տարեալ օրհնեցնես , նա ատեալ անարդեցի յԱստուծոյ , և դու պատուեալ մեծարեցիս : Եթէ ոք չար առնելով քեզ զրկեցի յաստիս՝ դու յորժամ փոխարէն չարին չար հատուցանես , երկորեանդ ի միասին դատապարտեսիք . ապա թէ փոխանակ չարին բարի հատուցանես նմա , դու Աստուծոյ նմանելով և պարտական տանջանացն զնա կացուցեր :

Տեսե՞ր սիրելի , եթէ զիա՞րդ կարացեր ի կեանս քո մեռուցանել զմառմինդ , և կատարել րդպատութիւնն Աստուծոյ , որով յերթայն քո անդ վայեցիս զարքայութիւնն երկնից : Նա՝ և առանց նահատակութեան հնարաւոր է յաստիս նուհատակացն վայելմանն և պակացն արժանի լինել , և և առաւել քան զնոսա : Զիա՞րդ , որպէս տնեմ , նորա տեսանելով զթշնամիսն՝ առ սակաւ մի ներեալ համրերեցին տանջանաց և արժանիք եղեն վայելման արքայութեանը :

Իսկ դու յիւրաքանչիւր աւուր նահատակութիւն կրես ի հարկաւոր ցանկութեանց , որ առ քեզ բնաւորեցան , որում եթէ ի դիմի հարկանելով յաղթես , նահատակութիւն կրեցեր . որով որպէս Յովսէփ պակեցիս : Բնազարէ դժեղա ախտ ազահութեանն , և յարդեանց և ստացուածոց ոչ տացէ ծախել աղքատաց , և յաղթես նրմին , ահա նահատակութիւն հաւաստի : Զրկէ ոք զեզ և կամ սրպանէ յեղրաց քոց , և յազգականաց , և դու ամենայն աւուր տեսանելով զնա , զինէ զեզ բնութիւնդ փոխարէն առնել նմա ըստ զործոց նորա , և դու պատերազմելով ընդ քեզ՝ յաղթես խորհրդոց չարին , ահա ամենայն աւուր նահատակիս , որով քան զմարտիրուացն վերագոյն պատրաստեսցի քեզ պատիւ :

Քանզի ոչ լոււաք երբեք զմարտիրոս նման լինել Հօրն երկնաւորի , որպէս այսպիսեաց զործողաց բերանով իւրով ասաց . Եթէ նմահօդք եղերուք Հօրն ձերոյ՝ որ յերկինն է : Որով զիս յորդորելով բանք տէրունեան Աւետարանին , և զայս համարձակեաց առելոյ . ոչ գաղարէի . զի որ մկրտութեամբն ուուր զարդարեալ է , և զերկու զառարինութիւնն զայս յինքեան ձգեսցէ , զանիծիս օրհնեցի , և առելեացն բարի արացէ , թէ բիւրապատիկ յանցան գործեալ իցէ , առանց պապակատութեան [աշխատութեան?] ապաշխարութիւնն զամենայն քաւեաց , եթէ ոչ այլ ի նոյնն անկանիցի :

Եւ զայսոսիկ քրիստոսեան չնորհն մեզ պարզեէ , զի որքան Քրիստոս քան զՄովսէս է բարձրագոյն , և առետարանս քան զօրէնան , խաչս քան զգաւազանն , եկեղեցիս քրիստոսեան քան զմորանն , մկրտութիւնն՝ որ ի Քո . , քան զթշնաման գծովուն մկրտութիւն , կենաց հաց՝ քան զմանանայն , կողահոս աղրիւրն՝ քան զիմանու ջուրն : Սոյնպէս և քահանայք և ժողովուրդք նորոյս քրիստոսեան հաւատոյս , փառաւորք և մեծամեծ[ք] քան զքահանայսն և

զժողովուրդս մովսիսեան եկեղեցւոյն : Վասնզի քահանայք նոցա , Մովսիսի ա-  
թոռակայք՝ և մերս քահանայք Քրիստոսի . ժողովուրդն այն՝ ծառայք Տեառն  
և վիճակ ժառանգութեան և վայելօղք երկրին աւետեաց . իսկ մերս ժողովուրդ ,  
սովոր Աստուծոյ , և եղբարք Քրիստոսի և տաճարք Հոգւոյն Սրբոյ :


Զորոց առնելով դհրաժմանսն՝ ոչ եթէ յաստիսս երկիր աւետեաց և Եթ-  
յաւերեսուուք , այս ընդ այսմ և զիսոստացեալ արքայութիւնն երկնից , որում բո-  
հրաւէր Երանելոյն՝ զալստեամբ առ մեզ Տեառն մերոյ և փրկչին Յի . Քի . , և  
խոստմամբ անսուտ բանի նորա , զոր առէ թէ՝ ուր եսն եմ՝ անդ և պաշտօնեայն  
իմ եղիցի :

Եւ նմա ընդ Հօր իւրում , հանդերձ Հոգւովի Սրբոյ , վասոք իշխանու-  
թիւն և :

Հրատ . Ա . Յ . Մ Բ Շ Ո Ւ Խ Ն Ի

(Ծար. 9)





## ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ ՄԻՈՒԹԵԱՆ ԵՕԹՆԵԱԿԲ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՄԵջ

Այս տարի, Եկեղեցներու Միութեան ազօթաժողովներու յատկաց-ուած ութ օրերը (18—25 Յունուար) երկու Կիրակիներու մէջն զուղադիպած ըլլալուն, արարողութիւններն ու հանդիսութիւնները կատարուեցան ճիշգ ի-րենց որոշեալ օրերուն:

Կիրակի, 18 Յունուար, մէր Ս. Ծննդեան ձրագլույցի օրը, կէսօրէ տուջ, բիւզանդական ծէսով պատարագ մատուցուեցաւ Ֆրանչիսկաններու վանքի Եկեղեցիին մէջ, Յոյն Կաթոլիկներու Մեծաւորին կողմէ և խօսուեցաւ պաշաճ քարոզ: Բնական է որ Ս. Ծննդեան տօնին առթիւ Հայեր Հկարենային մասնակցի նմանապէս նոյն օր կէսօրէ ետք, Բեթղեհէմի կէս ճամրուն վրայ դասուող Թանթուրի էկուումնիք կեղրունին մէջ կատարուած միջ-համայնքային ազօթաժողովին:

Յաջորդ օր, Երկուշարթի, 19 Յունուար, երեկոյեան ժամը ծին, Լուտերականներու եկեղեցիին էր կարգը Հիւրենիկալերու նմանօրինակ ազօթաժողով մը: Զանազան յարանուանութիւններէ բաղկացած կրօնական ու աշխարհիկ ժողովուրդ լեցուցած էր նորոգուած սրահը Եկեղեցիին և մէկ ժամ ակող արաբողութեան մը բնթացքին, գերմաններէն, անդլերէն և արարերէն լեզուններով եղան բնթերցուածներ ու ազօթքներ:

Ամենէն սրտագրաւ հաւաքոյթներէն մէկը եղաւ Երեքշարթի, 20 Յունուարի ժամը 5ին, Ֆրանչիսկաններու վանքի Եկեղեցիին մէջ կայացած ազօթաժողովը, որուն մասնակցութիւն բերաւ նաև Ս. Աթոռիս երկսեռ երդչախումբը՝ «Գովիմա Երուսաղէմ զծէրաք երգեցողութեամբ»: Խոկ հիւրարար Ս. Քաղաք գտնուող Ս. Ռիխտի Միարան և Միալույի Հող. Հովիւ Տ. Ժիրայր Վրդ. Թաջնեան իր շնորհալի և բամբ ձայնով մեներգեց «Անորբ Ասուուածքը: Անուանի երգէ Հոնակար Օկիւսթին Լամա նուազեց Պախի կրօնական երաժշտութենէն կտորներ: Եղան ընթերցումներ Փրանսերէն, իտալերէն, սպաններէն, անգլերէն, գերմաններէն և արարերէն լեզուններով, Ս. Գրական հատուածներէ: Հանդիսութեան աւարտին, ներկաններէն իւրաքանչիւրը իր ժայրենի լեզուով արտասանեց Տէրունական ազօթքը:

Զորեքարթի, 21 Յունուար, քաղաքիս արևմտակողմը, հրէական թաղամասներու մէջ զտնուող Եթովպական եկեղեցին լեցուն էր այլատեսակ քըրիստոնեայ հաւատացեալներով, որոնք մէկ ու կէս ժամ ունկնդրեցին Եթովպական կրօնական երաժշտութեան ուրոյն հրապոյը, իր յաճախակի ու երբեմը անսովոր ելէ էջներով:

Հինգշարթի, 22 Յունուար, Սիօն լերան Վերջին Ընթրիքի վերնատան մէջ էր հաւաքոյթը, որ թէւ կարձ՝ բայց տպաւորիչ եղաւ, կատարուած ըլլալուն այն վայրին մէջ՝ ուր հաստատուած էր քրիստոնէական եկեղեցին, Պենտեկոստի օրը: Յունաց ժառանգաւորաց երգչախումբը հանդէս եկաւ Հոգեգալստեան մեղեդիններով, եղան ընթերցումներ յունարէն և լատիններէն լեզուններով՝ Ս. Գիրքէն, որմէ ետք բոլորն ալ խմբուեցան Ս. Հոգիի մատուուն մէջ, ուր անձնական խոկումի և խորհրդածութեան պահէ մը ետք բոլորը մեկնեցան հոգեւպէս լիացած:

Ուրբաթ, 23 Յունուար, մերն էր կարգը կազմակերպելու նմանօրինակ աղօթաժողով մը, որ տեղի ունեցաւ երեկոյեան մթնշաղին, Ս. Յակոբեանց Մայր Տաճարի պլազացող դուռագեղ կանթեզներու ազատ բայց խորհրդաւոր լոյսերուն մէջ :

Այս տարի, Ս. Աթոռիս վարչութիւնը կարգադրած էր որ արարողութեան մեծագոյն բաժինը բաղկանայ խաղողական ժամերգութեան աղօթքներէն ու մեղեդիներէն : Մեծ պահոց օրերուն յատուկ այս ժամասացութիւնը ունի ինքնատիպ շեշտ ու խորհրդաւորութիւն՝ Հոգիները առինքնող :

Լուտերականներուն Երեց Գրօփսիթ Հէլմութ Կաթոքէ բացումը կատարեց գերմաններէն «Հայր մերով» : Մէջնդժէջ հանդէս եկան Հայր Քլարի Հէնտֆըրը՝ անգլիերէն և Ֆրանչիսկեան Հայր Ինկազիո Մանչինի՝ Փրանչերէն Ս. Գրական ընթերցուածներով : Հոգչ. Ճ. Կիւրեղ Շ. Վրդ. Գարիկեան, օրուան քարոզիչը, անգլիերէն լեզուով ներկայացուց Հայ ժողովուրդը իր մօտաւոր անցեալի արիւնու պատմութեամբ ու քրիստոնէական եկեղեցին իր բերած անդնահատելի մշակութային և այլ նպաստներով :

Ս. Աթոռիս երկսեռ երգչախումբին կողմէ երգուած քառաձայն «Հայր մերէն ետք, Արշմանարիթ Քօրնէլիուն Խօսուսաքին յունարէն լեզուով փակումը ըրաւ յոյժ սրտագրաւ այս երեկոյթին :

Շարաթ, 24 Յունուար, զանազան յարանուանութիւններէ անձեր, մասնաւորար կղերական, Ս. Յարութեան Տաճար իջնելով, մասնակցեցան Գողգոթայի վրայ պաշտուած Յունաց կիրակմուտքի Հսկման արարողութեան, վայելելով բիւզանդական Հոգեզրան մեղեդիները :

Եղրափակիչ Հանդիսութիւնը տեղի ունեցաւ, ուրիշ տարիներու նման, Շմիթ Աղջկանց վարժարանին մէջ, Կիրակի, 25 Յունուարի երեկոյեան : Որոշեալ ժամէն առաջ իսկ, ամէն սեռէ ու յարանուանութենէ բաղկացած բազմութիւն մը գրաւած էր սրահին բոլոր աթոռները :

Աղօթաժողով մը ըլլալի աւելի կրօնական համերգ մըն էր եղածը, որուն իրենց մասնակցութիւնը բերին յաջորդաբար Ֆրանչիսկեաններու, Յունաց Դպրեվանքի, Աւետարանական Լուտերականներու, Յոյն Արար Ս. Յակոբ և կեղեցիի, Ֆրէններու Երկրդ. վարժարանի, մեր երկսեռ երգչախումբի, Եթթղեհէէմէն ժամանած Սալէկեաններու երգչախումբերը : Մեր երգչախումբը կը զեկափարէր Ս. Աթոռի դպրապետ Պր. Սահակ Գալայշնեան : Հրանդ Սրկ. Շէրպէթհան մեներգեց «Մայրէնի լեզուան» : Տիկ. Նազիկ Պատմածեան իր չնորհալի ճայնով մեներգեց «Ղարաբաղի եղնիկը» : Խսկ երգչախումբը հանդէս եկաւ «Սուրբ սուրբ» և «Քըրիսոս պատարագեալ» Ս. Պատարագի հատուածներու երգեցողութեամբ, որոնց խանդավառ ծափեր խլեցին բարգահարիւր ունկնդիներէն :

Գոլէճի տնօրէնը իր փակման խօսքին մէջ չնորհակալութիւն յայտնելէ ետք հանդիսութեան ըլլոր մասնակցողներուն, իր գոհունակութիւնը յայտնեց մանաւանդ էկումենի այս ոգիին, իրարհասկացողութեան ու համերաշխութեան այն մթնոլորտին մասին՝ որով տոգորուած էին զանազան յարանուանութեանց պատկանող անձնաւորութիւններ՝ ամբողջ շարթուան մը ընթացքին, և որուն յարատեւուով միայն կարելի պիտի ըլլայ իրականացնել փոխարձեսիրոյ ու յարգանքի վրայ հիմնուած եկեղեցիներու մերձեցման ու ի վերջոյ միութեան գեղեցիկ հեռանկարը :

# ԱՅԱԿՈԲԻ ՆԵՐՈՒԵ



\* Կիր. 1 Փետր.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Մեղանին վրայի: Ժամարարն էր Հոգ. Տ. Ժիրայր Վրդ. Թաշենան, որ քառողկ՝ խօսելով քրիստոնէական հարատքի և պարտաճանաչութեան զգացումին վրայի:

\* Ծր. 7 Փետր.— Ս. Հայրապետացն Աթանասի և Կիւրդի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխադրի մատուին մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Անան Վրդ. Ղարիբեան:

\* Կիր. 8 Փետր.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի մեր վերնատան մատուին մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Անան Վրդ. Ղարիբեան:

\* Ծր. 14 Փետր.— Ս. Գրիգորի Աստուածաբանին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխադրի մատուին մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Ռուբէն Արդ. Ցովակինեան:

\* Կիր. 15 Փետր.— Բարեկանիան Առաջաւորի պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Մեղանին վրայի: Ժամարարն էր Հոգ. Տ. Գեղարդ Արդ. Տափաղարեան:

— Նոր Երուսաղէմի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին մէջ ևս Ս. Պատարագ մատուցուեցաւ: Ժամարարն էր Հոգ. Տ. Ասպետ Արդ. Պալեան:

\* Ուր. 20 Փետր.— Յիշատակ Ցովնանու մարգարէին: Առաօտուն, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ ընթերցումը Ցովնանու Մարգարէութեան Գրիմ:

— Ս. Սարգիսի ճախատօնակին ի Ս. Յակոպ ճախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեան:

\* Ծր. 21 Փետր.— Ս. Սարգսի Զօրավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Սարգիսի հնադարեան մատուին մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Ասպետ Արդ. Պալեան: Ս. Պատարագէն եւթ, ընկալեալ սովորութեան համաձայն, կատարուեցաւ հոգեհանգաւունան պաշտօն՝ հանգուցեալ մեծանուն բարերար Գալուստ Կիւպէկնեանի հօր՝ Սարգիսի հոգուն համար:

\* Կիր. 22 Փետր.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի վերնատան մեր մատուին մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Անան Վրդ. Ղարիբեան:

\* Եշ. 26 Փետր.— Տնառնեատաղի մեծահանդէս ճախատօնակին և անոր բազորդող «Անդատան»ին և Մոմավառութեան արարողութիւններուն ճախագահեց Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Ամէնեան:

— Իրիկանադիմին, Մայր Տաճարին մէջ պաշտուած «Եկեսցէ»ի և Հակման կարգերուն նախագահեց Հոգը. Տ. Կիրեկ Ռ. Վրդ. Գարիկեան:

— Գիշեղը, հակառակ անձնինաւ տեղացող անձունին և փոթորիկին, Ժառանգաւորաց Վարժարանի դաշտին վրայ կը վառէր Տեառնընդառաջի աւանդական կրակը:

\* Որ. 27 Փետր.— Տեառնընդառաջ: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուց Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Անձնեան:

\* Ծր. 28 Փետր.— Խաճակալ Պարթևի հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխադի մատուին մէջ: Ժամարան էր Հոգը. Տ. Հայկան Վրդ. Պատարամեան:

\* Նիր. 29 Փետր.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամարան էր Հոգը. Տ. Գեղարդ Արդ. Տառտարեան:

\* Ծր. 3 Մարտ.— Վարդանանց հանդիսաւոր նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Ամեն. Պատրիարք Ս. Հայրը:

\* Եշ. 4 Մարտ.— Ս. Վարդանանց օրավարացն մերց 1086 վկայիցն (Յիշատակ Մանելու և տօն ազգային): Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագնեց, ըստ սովորութեան, Ժառն. Վարժարանի և Ընծայառանի Փոխ-Տեսուչը՝ Հոգը. Տ. Նորինան Վրդ. Մանուկեան (ար տօնը Ս. Արոնին մէջ ճանչցուած է որպէս տօնը Ժառանգաւոր սաներուն): Հոգը. Հայրը քարոզնեց, Վարդանանց ոգորումն քարոզական դասեր հանելով ներկայ և երրունից և Ժառանգաւոր սաներուն: Քարոզէն եւոք, Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Անձնեան նախագահութեամբ կատարուեցաւ «Հայրապետական Մադթանք»՝ Ն. Ս. Օ. Ամենան Հայոց Տ. Տ. Վազգէն Ա. Կաթողիկոսի անուան տօնին աղիթու. իսկ Ս. Պատարագէն եւոք՝ հոգեհանգստեան պաշտօն՝ նախագահութեամբ Հոգը. Տ. Հայկան Վրդ. Պատարամեանի:

\* Որ. 5 Մարտ.— Իրաւական սովորութեան համաձայն, Ս. Պատարագ մատուցուեցաւ Աստղիներու Ս. Մարկոս Անտոնարամիչի նկեղեցին մէջ: Ժամարան էր Հոգը. Տ. Նորինան Վրդ. Մանուկեան: Ս. Պատարագէն եւոք Միաբանութիւնը պատուասիրուեցաւ Աստղիներու Գերշ. Եպիսկոպոսէն: Երթուղարձի թափօրները գիշաւորեց Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Անձնեան:

\* Ծր. 6 Մարտ.— Կ. Պոլսոյ Ա. Ժողովյան (881): Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխադի մատուին մէջ: Ժամարան էր Հոգը. Տ. Սենան Վրդ. Ղարիպէան:

— Երեկոյեան ժամերգութեան ընթացքին, ըստ սովորութեան, Մայր Տաճարի խորաններն ու զիշաւոր սրբանկարները վարագուրեցաւ:

\* Կիր. 7 Մարտ.— Բոն Բարեկենանան: Փակեալ խորանի Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամարան էր Հոգը. Տ. Հայկան Վրդ. Պատարամեան: Դպրապետի պաշտօնը կը վարէր Հոգը. Տ. Կիրեկ Ռ. Վրդիկեան:

\* Դշ. 10 Մարտ.— Ակիգրն կարգաց Մեծի Պահոց: Առաօտուն, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ «Արևագալ»ի առաջին ժամերգութիւնը, իսկ կէսօք եւոք՝ «Խաղաղական» առաջին ժամերգութիւնը:

\* Որ. 12 Մարտ.— Նախատօնակը պաշտուեցաւ Ս. Թորոս եկեղեցին մէջ, որ Զեռագրատունն է Ս. Արոնիս: Հանդիսապետն էր Զեռագրատան Տեսուչը՝ Գերշ. Տ. Նորայր Արքեպս. Պողարեան:

\* Ծր. 13 Մարտ.— Ա. Թեղողորսի Զօրավարին: Ա. Պատարագը մատուցնեցաւ Ա. Թորոս եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Ասպետ Արդ. Պալեան:

— Կէսօրէ ետք, վաղուան Արտաքսման Կիրակիի առիթով, Լուսարարապէտ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ալաննեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ա. Յարութեան Տաճար, որ պաշտոնցան երեկոյան ժամերգութիւնն ու նախատօնակը վերնատան մէր մատուցին մէջ: Ապա կատարուեցաւ Տնօրինական սրբավարերու ալցելութեան հանդիպարոր քափօր Տաճարէն ներս: Թափօրապէտն էր Հոգ. Տ. Հայկանք Վրդ. Պարամեան:

\* Կիր. 14 Մարտ.— Արտաքսման Կիրակի: Գիշերային և առաօտեան ժամերգութիւնները պաշտոնցան Ա. Յարութեան Տաճարի Վերնատան մեր մատուցին մէջ, որ և մատուցուեցաւ Ա. Պատարագ: Ժամարարն էր Հոգ. Տ. Գեղարդ Արդ. Տառութարեան: Ապա կատարուեցաւ երադարձ մնահանդէս քափօր՝ Քրիստոսի Ա. Գերեզմանին և Պատանատեղիին շորջ, գլխաւորութեամբ Լուսարարապէտ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպսիկոպոսի: Թափօրականներ կ'երգին Աղակերպութեան շարականներ:

\* Գշ. 16 Մարտ.— Երեկոյան Ա. Հրեշտակապետաց եկեղեցիին մէջ կատարուեցաւ Մէծ Պահու «Եկեսցէ» առաջին արարողութիւնը:

\* Եշ. 18 Մարտ.— Իրիկուան Հսկումին ի Ա. Յակոր նախագահէց և քարոզեց Հոգ. Տ. Կիրեղ Շ. Վրդ. Գարիկեան, բնարան ունենալով «Աւս ազգ ոչ եւամէ բաց միան պափօր և աղօթիք». բացարեց Պահքի ծագման ու զարգացման պարագաները, նախաքրիստոնէական շրջանն մինչն մեր օրերը:

\* Ծր. 20 Մարտ.— Ա. Կիրդի Երուսաղիմայ Հայրապետին: Ա. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան Ա. Կիրդի սեղանին վրայ, որուն տակ ցոյց կը տրուի այն աւագանը՝ որ Ա. Կիրդի Հայրապէտ 851 թուին, Ա. Խաչի երևման օրը, բազմաթի նորադարձներ մկրտած է: Ժամարարն էր Հոգ. Տ. Նորիկան Վրդ. Մանուկեան:

\* Կիր. 21 Մարտ.— Անառակին: Ա. Պատարագը մատուցուեցաւ Ա. Հրեշտակապետաց եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Ասպետ Արդ. Պալեան: Քարոզեց Հոգ. Տ. Հայկանք Վրդ. Պայտամեան, խօսելով ճշմարիտ քարեկամութեան մասին և մեկնարաններով Անառակի աւետարանական առակը:

\* Գշ. 23 Մարտ.— Իրիկուան Հսկումին ի Ա. Հրեշտակապետ քարոզեց Հոգ. Տ. Հայկանք Վրդ. Պայտամեան, խօսելով լեռներու կարևորութեան մասին թէ՝ Հին և թէ՝ Նոր Ռիխտերու մէջ: Մատնանշեց Սինա և Թարոր լեռները, և Գողգոթայի բլուրը՝ որ կատարուեցան կրօնից պատմութեան գլխաւոր դրուագները:

\* Եշ. 25 Մարտ.— Իրիկուան Հսկումին ի Ա. Յակոր նախագահէց Հոգ. Տ. Հայկանք Վրդ. Պայտամեան:

\* Ծր. 27 Մարտ.— Ա. Յովհաննու Երուսաղիմայ Հայրապետին: Ա. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ա. Գլխադիրի մատուցին մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Աւեան Վրդ. Ղարիպեան:

\* Կիր. 28 Մարտ.— Տնեւսին: Ա. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ա. Աստուածածնայ խորանին վրայ: Ժամարարն էր Հոգ. Տ. Գեղարդ Արդ. Տառութարեան: Քարոզեց Հոգ. Տ. Կորին Շ. Վրդ. Մանուկեան, մեկնարաններով Տնեւսի աւետարանական առակը:

\* Գշ. 30 Մարտ.— Իրիկուան Հսկումին ի Ա. Հրեշտակապետ նախագահէց Հոգ. Տ. Հայկանք Վրդ. Պայտամեան:

## ՅԱԻԵԼՈՒԱԾ

«ՍԻՌՆ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԿԻՒԹԻՆԿԵԱՆ ՄԱՍԵՆԱԴԱՐԱՆԸ

**ԶԱՐԴԱԿԱԼՈՒԹԵԱՄՔ ՍՏԱՑԱԾ ԵՆ ՀԵՏԵԽԵԱԱ ՀՐԱՑԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

**Ներեւա Շնորհայի - Աստուածաբան և էքիմէնիսոս - Գրեց՝ Արամ Վրդ. Քէշիշեան: Անթիլիաս, արտապուած Հասկիչն, 1973, Խոյժ.-Դեկտ., էջ 15:**  
**Ճերմամ Հշգիտածին-ի Հակարանի Դիրիթուամ: Գրաւրեան: Անթիլիաս, Առանձնատիպ կիլիկիոյ Կարողիկուսութեան Գաշտական Ամսագիր Հասկիի Խ. Տարի, 1974, Մարտ-Ապրիլ Բիւեն, էջ 15:**

**Ցաղացաց Մարգարուա Արքապիտկոզոս: Առօմանեցի (Կեանցն ու Գործունէութիւնը) - Ղարգան Ե. Վրդ. Տէմիքանան: Անթիլիաս, Տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1974, էջ 189:**

**Թաշերական Դէմիւ - Նշան Գէշիկթաշլեան: Հրատարակ. Գէորգ. Մելիքինեցի Գրական Մրցանակի: Խմբագիր՝ Պողոս Սնապեան: Անթիլիաս, Տպ. Հայոց Գորդի, 1969, էջ 1140:**

**Սուրբ Էցիմիածնի Միաբանութեան Գրական Դաշնամուրինք և Մայր Արքոնի Ցուքանքը - Արտակ Եպս. Միաբանաց: Առանձնատիպ էջ-միածին Ամսագիր 1972 թ. Դ. - ԺԲ. Համարներից: Հրատարակութեան պատրաստումը, Ներածութեանը, Ժահօթագրութիւնները և յանելուածը՝ Սուրբն Քոլանշեանի և Արթուր Հատիկեանի: Էջմիածին, Մայր Աթոռոյ Տպարան, 1973, էջ 182:**

**Թանքեր Մատենագարանի Թիւ 11: Երեան, Հայկական ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիայի Հրատարակչւթիւն, 1973, էջ 437:**

**Պաղաբանութիւն - Հ. Մանուկյ Քաջունի: Վենետիկի, Ս. Ղազար, 1899, էջ 308; Հաւարութուրիւն - Հ. Թակովը Վ. Տիրոյեան: Վենետիկի, Ս. Ղազար, 1921, էջ 172; Արշալոյո - Տարիկիրը 1922 Տարւոյ: էջ 158:**

**Թիրակիի Խաղեր Մահկապատճեներ Համար - Կազմեց և մշակեց Փ. Գոշունան: Երեան, Հայպետուամսնկրատ, 1971, էջ 62:**

**Ապու Թ. Խայիմի (Փանդազիա) Խմանողաւթեամբ ւերու Լալա Մահարիի: Գրեց՝ Խաչպար: Գէյրութ, Հրատարակութիւն 204ի Սուրբոյ և Լիբանանի Կեղրունական Վարչութեան էջ 20:**

**Հայոց Պատմութիւն - Ե. Տարի (Բ. Տարի, Միջին շրջան) - Սիմոն Սիմոնեան: Ե. Տայադրութիւն Հրատ. Սիմոն Հրատարակ: Տան, Գէյրութ, 1960, էջ 158; Կեանի Մէջ - Հրատա Մարտու: Հայէպ, Տպ. Արարատ Խանուք, 1934, էջ 250; Սիւան, Ընթերցանամ - Ե. Տարի: Վենետիկի, Ս. Ղազար, 1948, էջ 259:**

**Կոնիստո Վարդապետի Հոգեւոր և Աշխարհիկ Պատմութունները - Կ. Գուհս, Տպդր. Վահրամ Տէր-Ներսէնեան, 1927:**

**Հայոյ և Արդի (Վահակներ, Պատմուածքներ, Լեգենդներ) - Հմայեակ Սիրաս, Երեան, Հայպետուրատ, 1946, էջ 362:**

**Հայոց Սևնանունների Բատուր (Բ.) - Հ. Առանեան: Երեան, Գետական Համակարանի Հրատարակութիւն, 1944, էջ 882: էջ 64:**

**Խ Ծնայ Ծէ-Շօրի Դմէնիք - Երևանդի Տէրենց: Գէյրութ, Տպ. Սիւան, 1966; Հայտանանի Խոմսօպիտուններ Հայրենական Մեծ Պատերազմիթ - Խմբագրութեամբ Ա. Դուռիսանեանի: Կազմեց Ս. Գալպարեան: Երեան, Հայպետուրատ, 1944, էջ 137:**

**Everyday Domestic Science and Hygiene - By I. C. Joslin and P. M. Taylor. London, Macmillan & Co. Ltd., 1942, pp. 532.**

**A Man of Forty - By Gerald Bullett. Guild Books No. S 106. London, published for the British Publishers Guild by J. M. Dent and Sons Ltd., 1944, pp. 168.**

**Approach to English Literature - By Harry Bell. Designed and illustrated by Alex Bennett. Edinburgh and London, published by W. & R. Chambers Ltd., 1965, pp. 256.**

**George Muller (The Modern Apostle of Faith) - By Frederick G. Warne. With Portrait of Mr. George Muller taken on his 90th Birthday and other Illustrations. 5th Edition.. Copyright. Bristol, Burleigh Ltd.; London, S. W. Partridge & Co., 1898, pp. 243 + 32**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

---

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ**

Հայ Սփիտքը և Փոքրամասնութիւններու  
Ռոբերգովութիւնը

Ե.

38

**ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ**

Տեղիք Աստուածաբանութեան

ՄԱՂԱՔԻԱ ԱՐՁԵՊԱ. ՕՐՄԱՆԵԱՆ

43

**ԿՐՈՆԱԿԱՆ**

Պահքը

Ե.

48

Աստուածային Նախախնամութիւն

Ն. ԱՐՁԵՊԱ. ՊՈՂԱՐԵԱՆ

52

**ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ**

Սասունցիների Պարը

ԳԵՂՐԳ ԷՄԻՆ

53

**ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ**

Յակոր Դակր

Ն. ԱՐՁԵՊԱ. ԾՈՎԱԿԱՆ

58

Աւտարանացոյց

Յ. Ս. ԱՆԱՍԵԱՆ

59

**ՊԱՏՄԱԿԱՆ**

Ուղուագծեր Հայոց Կանքերին կից Կարդապետարանների Պատմութիւնից

ՎԱՀԱՆ ԵՊԱ. ՏԵՐԵԱՆ

62

**ԶԵՂԱԳՐԱԿԱՆ**Քանի մը Ֆիշատակարաններ Տըպինի Սըր  
Չեսդր Պիղիի Հաւաքածոյէն

Յ. ԶԻՒՐՏԵԱՆ

67

**ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ**Ի Յայտնութիւն Տեառն և ի Ս. և ի Լուսատը<sup>ր</sup>  
Սկրտութիւնն

Հրատ. Ա. Յ. ՄՐՃՈՒՆԻ

70

Եկեղեցիներու Միութեան Եօթնեակը  
Երուաղեմի մէջ

77

**Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԻՆ**

Եկեղեցականք - Բեմականք

79

**ՅԱՒԵԼՈՒԱԾ**Յանկ «Սիոն»ի Խմբագրութեան և Գ.  
Կիլաբէնկեան Մատենադարանին կողմէ  
Ստացուած Գիրքերու

82

Բովանդակութիւն

83

# C O N T E N T S

---

**EDITORIAL**

The Armenian Diaspora and the tragedy of the minorities	<i>Y.</i>	38
--	-----------	----

**THEOLOGY**

Rudiments of Theology	<i>Archbp. Maghakia Ormanian</i>	43
-----------------------	----------------------------------	----

**RELIGION**

The Lent	<i>Y.</i>	48
----------	-----------	----

Divine Providence	<i>Archbp. Norayr Bogharian</i>	52
-------------------	---------------------------------	----

**POETRY**

The Dance of the Sassoun people	<i>Kevork Emin</i>	53
---------------------------------	--------------------	----

**PHILOLOGY**

The Scribe Hagop	<i>Archbp. N. Dzovagan</i>	58
------------------	----------------------------	----

On Bible readings	<i>H. S. Anassian</i>	59
-------------------	-----------------------	----

**HISTORY**

On the history of Armenian Theological Schools	<i>Bp. Vahan Derian</i>	62
---	-------------------------	----

**MANUSCRIPTS**

Some colophons from the Sir Chester Batty collection	<i>H. Kurdian</i>	67
---	-------------------	----

**PHILOLOGY**

Eulogy	<i>Ed. A. H. Serjouni</i>	70
--------	---------------------------	----

The Ecumenical week of prayers in Jerusalem		77
---	--	----

Monthly news from the Armenian Patriarchate		79
---	--	----

Contents		84
----------	--	----

---

Yearly subscription: 10 U. S. Dollars  
 All correspondence should be addressed to:  
 Ara Kaisydjian, The St. James Press  
 P. O. Box 14001, Jerusalem — Israel